Azg
Ազգ
21 ՄԱՐՏ 2008 ՈՒՐԲԱԹ 54 (3948)

Դինքի ընտանիքը դիմելու է Եվրոպական դատարան

«Ակօս» թերթի խմբագիր Հրանտ Դինքի ընտանիքը դիմելու է Մարդու իրավունքների եվրոպական դատարան: Դինքի ընտանիքը նման որոշում է կայացրել անփութություն ցուցաբերելու համար վարչական ծառայողների դեմ հարուցված գործերում ներքին իրավական ուղիների սպառման պատճառով: Ըստ «Նոյյան տապանի», մի քանի անգամ թուրքական դատական այցելությունը մերժել են Հրանտ Դինքի փաստաբաններ՝ Տրաբզոնի նահանգի անվտանգության ծառայության մի քանի աշխատակիցների դեմ հետաքննություն սկսելու պահանջը: Փաստաբանները պահանջում են, որ հետաքննություն սկսվի Տրաբզոնի անվտանգության վարչության, հատուկ ծառայության նախկին պետերի, ինչպես նաեւ ներկայիս դեկավարի եւ անվտանգության ծառայության աշխատակիցների դեմ իրենց պարտականությունների մեջ թերանալու պատճառով հանցագործության կանխման ուղղությամբ անհրաժեշտ միջոցառումներ չձեռնարկելու կապակցությամբ:

Նախագահ Քոչարյանը նորընտիր նախագահին է հանձնելու կայուն եւ կառավարելի երկիր

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Արտակարգ դրության վերջին օրը երեկ էր, եւ Նախագահ Ռոբերտ Քոչարյանն ամփոփեց վերջին 20 օրվա իրավիճակը: Միանգամից ասենք՝ արտակարգ դրությունը երկարաձգելու ոչ մի պատճառ չկա, չարտոնված նոր հանրահավաքներն էլ, որոնց այսօր անցկացման մասին երեկ հայտնում էին տարածել նախկին նախագահի կողմնակիցները, ի դեպ, անմիջապես ցրվելու են:

Ըստ Նախագահ Քոչարյանի՝ իրադարձությունները ցույց տվեցին, որ արտակարգ դրության իրավական ռեժիմ մտցնելը հնարավորություն տվեց խուսափելու ավելի մեծ կորուստներից եւ ավելի ծանր հետեւանքներից: Մտցնելուց հետո անմիջապես վիճակը հանդարտվեց եւ հնարավորություն ստեղծվեց կոնկրետ գործողություններով ամրապնդելու այդ կայունացման պրոցեսը: Ամբողջ այդ 20 օրվա ընթացքում արտակարգ դրության իրավական ռեժիմի որեւէ խախտում չի գրանցվել, բանակն ու ոստիկանությունը ցուցաբերում էին զսպվածություն իրենց ծառայության ընթացքում եւ բնակչության ճնշող մեծամասնությունը ըմբռնումով էր մոտենում այս միջոցառումներին. «Կյանքը մտնում է իր բնականոն հունի մեջ, եւ ես չեմ տեսնում որեւէ գործոն կամ ազդակ՝ արտակարգ դրությունը երկարացնելու», ասաց նա:

Նա իր խնդիրը համարեց վիճակի ամբողջական կայունացումը՝ կառավարող եւ կայուն վիճակով իշխանության փոխանցումը նորընտիր նախագահին առպահովելով: Քննչական խումբն աշխատում է, նյութերի ծավալները մեծ են, իրավապահների առջեւ խնդիր է դրված ամբողջությամբ վերականգնել իրադարձությունների պատկերը, բացահայտել մեղավորներին եւ հրավիրել պատասխանատվության: Խոսքն առաջին հերթին կազմակերպիչների եւ դրդողների մասին է: Իսկ այն մարդիկ, ովքեր մոլորված լինելով են մասնակցել անկարգություններին, եթե կամավոր ներկայանան եւ օժանդակեն քննչական խմբին, արդա վերաբերմունքը նրանց նկատմամբ կլինի շատ ավելի մեղմ. «Այդպիսի բազմաթիվ օրինակներ ունենք», հայտնեց նախագահը: Իրավապահ մարմինները շարունակելու են աշխատել, նախագահի կարծիքով՝ արդեն այսօր միանշանակ կարելի է ասել, որ զանգվածային անկարգությունները կրել են կազմակերպված բնույթ, սկսած բարիկադների կառուցումից մինչեւ թալանի, ջարդարարության գործողությունները:

Նախագահ Քոչարյանը նշեց մի քանի դրսեւորման մասին:

Տես էջ 2

ԿԱՐԳԱԿՈՐՈՒՄ

ԵԱՀԿ ՄԽ. «Չեն ճանաչում Լեռնային Ղարաբաղի անկախությունը... բայց ԼՂ աղագա կարգավիճակը բանակցության առարկա է»

«...Ֆրանսիան, Ռուսաստանի Դաշնությունը եւ Միացյալ Նահանգները աջակցում են Ադրբեջանի տարածքային ամբողջականությանը եւ հետեւաբար չեն ճանաչում Լեռնային Ղարաբաղի անկախությունը, միաժամանակ հաստատելով, որ Լեռնային Ղարաբաղի աղագա կարգավիճակը կողմերի միջեւ բանակցությունների առարկա է», մարտի 19-ին նման հայտարարությամբ Վիեննայում հանդես են եկել ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ Ժյուի Մերզլյակովը, Բերնար Ֆասիեն եւ Մեթյու Բրայզան:

Հիշեցնելով, որ դեռեւս մարտի 14-ին Վիեննայում համանախագահները հանդիպել են Հայաստանի արտգործնախարար Վարդան Օսկանյանի, իսկ մարտի 15-ին Փարիզում՝ Ադրբեջանի ԱԳ նախարար Էլմար Մամեդյարովի հետ, հայտարարության մեջ նշվում է, որ համանախագահները մնում են համոզված, որ հակամարտության յուրաքանչյուր խաղաղ ու արդար կարգավորում կպահանջի կողմերի անխուսափելի փոխզիջումներ: Համանախագահները ընդգծել են, որ շուտափույթ հարկ է ամփոփել բանակցությունները Հայաստանում նախագահական ընտրություններով առաջացած դադարից հետո, ավելացնելով, որ երկու կողմերի արտգործնախարարները վերահաստատել են բանակցությունների շարունակման անհրաժեշտությունը:

Համանախագահները առաջարկել են երկու ԱԳ նախարարներին հնարավորինս արագ կազմակերպել Հայաստանի եւ Ադրբեջանի առաջնորդների հանդիպումը՝ ինչարկելու ԵԱՀԿ ՄԽ մադրիդյան առաջարկը՝ հիմնարար սկզբունքների ամբողջական փաստաթղթի տեսքով: Մինսկի խումբը, նկատի ունենալով օժանդակում վերջերս տեղի ունեցած իրադարձությունները, կոչ է արել կողմերին զերծ մնալ միակողմանի եւ մարտահրավիրական գործողություններից ինչպես բանակցությունների սեղանին, այնպես էլ հասարակական հայտարարություններում:

ԱՐԱՐԱՏԻ ՏԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Բուշը թույլատրեց զենք մատակարարել Կոսովոյին

Նախագահ Ջորջ Բուշը թույլատրել է զենք առաքել Կոսովո: Նրա խոսքերով, Սերբիայից անջատված երկրամասի զինումը կամրապնդի ԱՄՆ-ի անվտանգությունը եւ կնպաստի աշխարհում խաղաղության հաստատմանը:

Ֆրանսիրեսը նշում է, որ Սոֆիայի ներկայացուցիչները նախագահի ելույթը բնութագրել են որպես միջկառավարական հարաբերությունների հաստատմանն ուղղված օրինակելի քայլ:

Փետրվարի 17-ին Կոսովոյի անկախության հռչակումից հետո ԱՄՆ-ը ճանաչել էր սերբական այդ երկրամասի անկախությունը: Ի պատասխան՝ Սերբիայի դեսպանը հետ էր կանչվել Վաշինգտոնից:

Կոսովո են ուղարկված ՆԱՏՕ-ի եւ ՄԱԿ-ի խաղաղապահ ուժեր: ՄԱԿ-ի որոշման համաձայն, Կոսովոյին թույլատրված է ունենալ 2500 հոգանոց թեթեւազեն բանակ՝ ՆԱՏՕ-ի ուժերի վերահսկողության տակ:

Երեկ Սերբիան իր դեսպաններին հետ է կանչել նաեւ խորվաթիայից եւ Հունգարիայից, որոնք ավելի վաղ ճանաչել էին Կոսովոյի անկախությունը: Ֆրանսիրեսը նշում է, որ Հունգարիան խոխսուում է Տրանսիլվանիայում (Ռումինիա) ապրող հունգարների՝ ավելի մեծ իմքնուրույնության հասնելու ձգտումը:

Խորվաթիան իր հերթին ուզում է ավելի լայն իրավունքներ ապահովել Բոսնիա-Հերցեգովինայում ապրող խորվաթների համար:

Երեք տարվա կալանք «Ակօսին» սպառնալու համար

Սամբուլի Հիելի երեսկան դատարանը 3 տարվա ազատազրկման է դատապարտել ոմն Ջաֆար Ֆիլիզի, որը սպառնալիքներով լի էլեկտրոնային նամակ էր ուղարկել «Ակօս» թերթի խմբագրությունը: Հաղորդվում է, որ դատարանը նրան 2 տարվա ազատազրկման էր դատապարտել սպառնալիքներով նամակ ուղարկելու եւ եվս մեկ տարի՝ հայհոյանքի համար:

SYSTEM OF A DOWN-ի համերգը Սոլթ Լեյք Սիթիում

System of a Down ռոք խումբը Սերժ Թանգյանի գլխավորությամբ առաջիկայում հանդես կգա հաջերգով Սոլթ Լեյք Սիթիում: Հայ-ամերիկյան ռոք խումբը չի ցրվել, այլ ուղղակի ժամանակավոր դադար է վերցրել: Նշենք, որ 1998 թվականից ի վեր խումբը հինգ ալբոմներ է թողարկել, որոնցից երեքը երաժշտական հիթերում առաջին հորիզոնականներ են գրավել:

Սլովենիա մուտքի արտոնագրեր կտրամադրի Լեհաստանի դեսպանությունը

Տեղեկացնում ենք, որ մարտի 14-ին Լեհաստանի եւ Սլովենիայի արտգործնախարարությունների միջեւ արտոնագրերի թողարկման վերաբերյալ ստորագրված համաձայնագրի եւ ընդհանուր հյուպատոսական կարգի հիման վրա Երեւանում Լեհաստանի դեսպանությունը լիազորված է տրամադրելու Սլովենիայի մուտքի արտեր տեսակի արտոնագրեր՝ օդանավակայանի (A), տրանզիտ (B) եւ կարճաժամկետ կացության (C):

Վաղը՝ «Ազգ-Մշակութային» հավելվածում

Խախտելով պարբերականությունը, «Ազգ»-ի մշակութային հավելվածը լույս կտեսնի վաղը: Այս անգամ Ն. Զարյան-Հ. Քոչար գնահատման հարցի շուրջ բանավեճում իր տեսակետները կփարզի Հայյա Քոչարի դուստրը՝ Նվարդ Քոչարը: Գրականության ինստիտուտի տնօրեն, գրականագետ Ազատ Եղիազարյանը «Տիգրանամին» պատասխան կտա անցյալ շաբաթ մեր մշակութային Նեռիում հանդես եկած գրականագետ Դավիթ Գասպարյանին, իսկ պատմաբան-հասարակագետ Քնարիկ Ավագյանը կներկայացնի լրագրող Հասմիկ Գուլակյանի «Դարը մեր մեջ, մենք՝ դարի» ֆառահատոր գիրքը՝ մեր հայենի արվեստագետներից լայն մեջբերումներով:

Սերժ Սարգսյանը կմեկնի Մոսկվա

ՀՀ նորընտիր նախագահ, վարչապետ Սերժ Սարգսյանը մարտի 24-ին աշխատանքային այցով կմեկնի Ռուսաստանի Դաշնություն: Այցի շրջանակներում նա հանդիպումներ կունենա ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի, նորընտիր նախագահ Դմիտրի Մեդվեդեւի եւ կառավարության նախագահ Վիկտոր Զուբկովի հետ: Նախատեսվում է ինչարկել երկկողմ հետաքրքրություն ներկայացնող հարցերի լայն շրջանակ:

ՅՈՒՆԵՍԿՕ-ն ակտիվանում է

Երեկ ՀՀ ԱԳՆ-ում փաստաթուղթ ստորագրվեց ՀՀ կառավարության եւ ՅՈՒՆԵՍԿՕ-ի միջեւ համագործակցության վերաբերյալ: ՀՀ ԱԳ նախարար **Վարդան Օսկանյանը**, Հայաստանում ՄԱԿ-ի մշտական համակարգող **Կոնսուելո Վիդալը** եւ Մոսկվայում ՅՈՒՆԵՍԿՕ-ի գրասենյակի տնօրեն **Դենդեւ Բադարչը** ստորագրեցին մի փաստաթուղթ, որն առավել կանոնակարգելու է ՅՈՒՆԵՍԿՕ-ի գործունեությունը Հայաստանում, մասնավորապես կրթության, գիտության, մշակույթի եւ հեռահաղորդակցության ոլորտներում: «Այս ծրագիրը մշակվել է, որպեսզի հասակեցնենք Հայաստանում գործող ՄԱԿ-ի գրասենյակների միջեւ համագործակցությունը եւ ավելի արդյունավետ դարձնենք ՅՈՒՆԵՍԿՕ-ի ներդրումը երկրի զարգացման գործում: Հետագա երկու տարիներին ՅՈՒՆԵՍԿՕ-ի գործողությունները կենտրոնանալու են քարոզչության, կարողությունների ընդլայնման, հետազոտության, քաղաքականության մշակման, ինչպես նաեւ նախնական աջակցության տրամադրման ոլորտներում», մասնավորապես նշեց ՅՈՒՆԵՍԿՕ-ի գրասենյակի տնօրեն Դենդեւ Բադարչը: Նա արտգործնախարարին իր գոհունակությունը հայտնեց կրթության, բիոէթիկայի, մշակույթի եւ ՅՈՒՆԵՍԿՕ-ի մանդատին վերաբերող այլ ոլորտներում իրականացվող աշխատանքների առթիվ: «Հայաստանը պատրաստ է ՅՈՒՆԵՍԿՕ-ի եւ ՄԱԿ-ի մյուս գործակալությունների հետ համագործակցության», կարծիք հայտնեց պատասխանյան:

Իր խոսքում ՀՀ ԱԳ նախարար Վարդան Օսկանյանը նշեց. «Այս ծրագիրը գալիս է լրացնելու ՄԱԿ-ի հետ մեր երկարաժամկետ համագործակցությունը: Հիմնական հետքը կլինի կրթական ծրագրերի, առիթության նպաստման ինստիտուտների առավել ամրապնդումը Հայաստանում»:

Լրագրողներից մեկի հարցին ի պատասխան, Դենդեւ Բադարչը մանրամասնեց, որ արդեն իսկ գիտության ոլորտի ուսումնասիրման համար փորձագետը՝ Մարկո Մարկոլան, սկսել է իր ուսումնասիրությունները, եւ հետագայում արդեն կառավարության հետ ինչարկումները կլինեն կոնկրետ գործողությունների մասին: Եվս մեկ կարեւոր ծրագիր վերաբերում է ժողովրդական դրտրկ գործիքը հանրահայտ դարձնելուն: Մեկ ուրիշ ծրագիր էլ մշակութային տուրիզմի խթանմանը միտված նոպասի, որի համար արդեն ուսումնասիրություններ են կատարվել Հայաստանի 6 մարզերում: Դենդեւ Բադարչը նշեց, որ իրենք ունեն Հայաստանում մշակութային հուշարձանների ցուցակը, որում ընդգրկված 3 մշակութային հուշարձաններ համարատասխան փաստաթղթային հիմքերի դեպքում կարող են ընդգրկվել համաշխարհային ժառանգության կազմում:

ՍՈՒՍԱՆՆԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Դատական երկրորդ ընդդեմ վճիռը եւ ժողովրդական աննախադեպ բարոյական ու դրամահավաք-աջակցություն ԳԱԼԱ-ին

ՀՀ վարչական դատարանի Գյումրու նստավայրում դատավոր էդ. Նահապետյանը այս չորեքաբթի հրապարակեց Գյումրու հարկային տեսչության եւ «ՅԱՊ» ՍՊԸ-ի ԳԱԼԱ հեռուսաբնակության հիմնադրի փոխադարձ հայցով դատարանի կայացրած վճիռը: Դատարանը բավարարեց ընկերության հարկային ստուգման ակտի հիման վրա «ՅԱՊ» ՍՊԸ-ից ավելի քան 25 մլն դրամ բռնագանձելու հայցադիմումը, որը նման դեպքում կարող է նշանակել ընկերության սնանկացում եւ հեռուսատեսության փակում: Ճիշտ է՝ դատարանի վճռում նշված էր եւ այդ հայցի, եւ հարկային տված ակտ անվավեր ճանաչելու պահանջով ընկերության հանդեմ հայցի մասնակի բավարարում, սակայն այդ «մասնակի» վերաբերում էր ընդամենը 96 հազար դրամին, այսինքն՝ հարկային պահանջած 25 մլն 212,7 հազար դրամի փոխարեն բռնագանձվելու է 96 հազար դրամով պակաս, ինչն ըստ էության ոչինչ չի փոխում:

Ելնելով բուն դատավարության ընթացքից, դատարանի նման վճիռը կանխատեսվում էր: Հիշեցնեմ, որ փետրվարի 29-ին Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանը եւս, հաղթահարելով հայցի հիման վրա, «ՅԱՊ» ՍՊԸ-ին ընդդեմ վճիռ էր կայացրել՝ նրան պարտադրելով հաղթի հին հեռուսաաբոնակն ազատել ԳԱԼԱ-ի հեռարձակող սարքավորումներից: Ընդսմին նաեւ մերժվել էր ազատակի նկատմամբ հարկադիր սերվիտուտ, այսինքն դրա մասնակի օգտագործման իրավունք սահմանելու մասին ընկերության հակընդդեմ հայցը: Ընկերության ներկայացուցիչները հայտարարել են, որ իրենք վճիռը օրենքով սահմանված կարգով բողոքարկելու են, ընդհուպ Եվրոդատարան:

Սակայն այն, ինչ հենց չորեքաբթի օրվա առավոտյանից տեղի է ունենում ԳԱԼԱ-ի շուրջը դատարանից դուրս, ուղղակի հաճելիորեն զարմանալի է ու մեզանում երեւի աննախադեպ: Խոսքի ազատության եւ ԳԱԼԱ հեռուսաբնակության հասարակական պաշտպանության շաբաթ նախաձեռնած՝ ԳԱԼԱ-ի աջակցության հեռուսաամարաթոն-դրամահավաքը Գյումրիում ու Շիրակի մարզի տարածքում, մասամբ նաեւ նրա սահմաններից դուրս հաճերախտության այնքիսի ալիք ու մթնոլորտ է առաջացրել, որ կարծես մարդիկ հենց դրան էլ սպասում էին: Առավոտից մինչեւ ուշ երեկո նրանք գալիս ու գալիս են հեռուսաբնակություն, իրենց բարոյական ու նյութական աջակցությունը ցուցաբերում, ուղիղ եթերից կամ նամակներով իրենց խոսքն ու մաղթանքը հղում ԳԱԼԱ-ին: Հեռուսաբնակության շուրջը մարդկանց հանախմբումը, ինչպես նշում են բոլորը, բազմակողմանի տեղեկատվության, ազատ խոսքի իրավունքի պաշտպանության ցանկությունն ու թանկ գնահատումն է, որի կողքն այսօր համարում են ԳԱԼԱ-ին: Բարոյական ու նյութական աջակցություն ցուցաբերողները ամենատարբեր տարիքի ու զբաղմունքի մարդիկ են՝ պատանիներից մինչեւ 80-ն անց թոշակառուներ, գործազուրկից, մանկավարժից, բժշկից, լրագրողներից ու այլ մասնագետներից մինչեւ գործարարներ, այլ հաղթաթղթեր:

Անցած 19-ի ուշ երեկոյան, ինչպես հայտարարվեց ուղիղ եթերից, արդեն հավաքվել էր 8 մլն դրամից ավելի գումար, չհաշված արտերկրից փոխանցումները, որոնց վերաբերյալ դեռ տեղեկություններ չկային: Երեկ ամբողջ օրը հեռուսամարաթոնն ու դրամահավաքը շարունակվում էին: Վերջինս կատարվում է նաեւ «Յունիբանկի» Գյումրու մասնաճյուղում, հատուկ այդ նպատակով բացված հաշվեհամարով: Խոսքի ազատության եւ ԳԱԼԱ-ի պաշտպանության շաբաթ համակարգող, ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի խորհրդի նախագահ Լեւոն Բարսեղյանի հավաստմամբ՝ դրամահավաքը կշարունակվի այնքան, մինչեւ հավաքվի 25 մլն 116,7 հազար դրամ: Դա այն գումարն է, որ ԳԱԼԱ-ի սեփականատերը դատարանի վճռով պետք է փոխանցի պետբյուջե: Երեկ, ժամը 19-ի տվյալներով, հանգանակվել էր 10 մլն 700000 դրամ:

ԳԵՂԱՄ ՄԱՐՏՈՅԵՆ

Նախագահ Քոչարյանը նորընտիր նախագահին է հանձնելու կայուն եւ կառավարելի երկիր

1-ին էջից

Նախագահ Քոչարյանը նշեց մի խնդիր դաստ տեղի ունեցավից.

Առաջինը՝ որ կարիք կա ժողովրդավարությունը պաշտպանել ամբոխավարությունից: Հայաստանում տնտեսական, պետական կառավարման, հասարակական կյանքի լայնածավալ բարեփոխումներ իրականացվել են, բայց օրենսդրորեն պետք է պաշտպանվեն պետականության հիմքերը, ինչն, ի դեմ, օրենսդրությունն այնքան էլ լավ չի աշխատել. «Ես նախաձեռնելու եմ, որ մեր օրենսդրությունը եւս պետական հիմքերն անդրադարձնելու եւ պաշտպանելու շատ ավելի խիստ նորմեր նախատեսի: Այդ հայլերը ժողովրդավարության հիմքերը թուլացնելու հավակնություն չեն լինելու, այլ՝ առաջին հերթին ժողովրդավարությունը ամբոխավարությունից եւ արկածախնդրությունից պաշտպանելու նպատակով... հատկապես այն մարդկանց կողմից, ովքեր պատրաստ են ուրիշների կյանքն զոհաբերել իրենց քաղաքական ամբիցիաների համար»: Նախագահը դաս հանեց այն բացահայտումը, որ ուսիկանությանը պետք է այսօր աշխատել ավելի ժամանակակից եւ անվնաս հատուկ միջոցներով. «Իրադարձությունները ցույց տվեցին, որ այն, ինչ ունենք, բավական հնացած է, եւ միշտ չէ, որ անվնաս է», ասաց նա՝ նկատելով, որ հաղթաթղթական անձանց 7 զոհվածների թիվը 3-ով պակաս կլինեին, եթե այդ միջոցները ավելի անվնաս լինեին:

Պետք է տվել հրամանը կրակելու. ափսոսանք՝ ոչ մի երկրում ուսիկանությունը հատուկ հրամանի կարիք չունի, եւ օրենքը նախատեսում է, որ ուսիկանությունն իրավունք ունի միջոցներ կիրառելու, եթե կա ուղղակի սպառնալիք ուսիկանի կամ երրորդ անձի կյանքի նկատմամբ:

Հետեւություններից մեկն էլ այն է, որ վճռական քայլեր պետք է կատարվեն՝ բացառելու հասարակական կազմակերպությունների նեղգրավվածությունը հաղթականության մեջ: Ըստ նախագահ Քոչարյանի՝ «Ոգու փորձությունը» ամբողջությամբ նեղգրավված է եղել անկարգությունների մեջ եւ ակտիվ մասնակից. «Երկրապահ» կամավորականների միության որոշ ակտիվիստներ եւս մասնակցել են, իսկ թե կազմակերպությունն ինքը մասնակցել է՝ քննությունը ցույց կտա, այդ հեռանկարը հեռացայում պետք է բացառվի. «Եվ ոչ մի նման կազմակերպություն հաղթական գործընթացներում իրեն ջոկերի տեղ չպետք է դնի, դա լրջագույն վտանգ է ՀՀ-ում»:

ԶԼՍ-ների մասին. հասարակությունը բավական լուրջ հավաք, վերջ է սացել, եւ սա ոչ միայն զոհվածներն ու վիրավորներն են. «Երբեմ չէի պատկերացնում, որ կլինեին մարդիկ, որոնք կիրկիզեն շատրվանների մեքենաները՝ թողնելով վիրավորներին ասֆալտի վրա», նկատեց Նախագահը՝ ընդելով, թե շատերս բաներ կախված են մեզանից, լրագրողներիցս եւ թե ինչպես նեմ այս բոլորը մատուցելու ժողովրդին: Փորձելու նեմ հանրել նոր լարվածություն, թմ՝ հանդարտանն նեմ աջակցելու:

Խորհրդարանական արտահերթ ընտրությունների վերաբերյալ արտբր երբանակներից հնչող առաջարկների վերաբերյալ հարցին հարցով պատասխանեց՝ մեր են լինում այդպիսիք. լինում են մեկ պարագայում՝ երբ խորհրդարանն ընդունակ չէ կառավարություն ձեւավորելու, ընդունակ չէ մեծամասնություն կազմելու իր ներսում, բացի այդ՝ ոչ մի ընտրություն ՀՀ-ում կրկնի հանդարտեցման չի բերել. «Ուրեմն, ինչ-որ նոր ցիկլերի մեջ մտնել, որոնք այսօրվա վիճակն ավելի կբարդացնեն՝ անհասկանալի է ինձ համար», ասաց Նախագահը:

«Ազգի» հարցին, թե հաղթական ինչ հայլերով պետք է թուլացնել ներհաղթական լարվածությունը, ինչ որ անկախ իրավական միջոցառումներից՝ 300 հազարի դժգոհությունը մնալու է՝ Նախագահ Քոչարյանն առաջարկեց նայել այլ երկրների ընտրությունների փորձին. այն է՝ 1-2-0,5 տոկոսի տարբերությամբ է ընտրվում Նախագահ: Սրանից ոչ ոք ողբերգություն չի սարքում, չեն ասում, ասենք, ժողովրդի 49,5 կես տոկոսն այլ կերտ է մտածում կամ պետական հանձնարարը փոխենք, գրենք խորհրդարանը, սահմանադրությունը փոխենք. «Սա հաղթական մտակոտի հարց է»: Եվ հիշեց, որ 2003 թվականին Սեթիան Դեմիրճյանն ավելի շատ ձայն է հավաքել, քան Լեւոն Տեր-Պետրոսյանն այսօր. «Ինչ է, պետք է գնայինք ու պետական համակարգ փոխեինք: Աննորմալ վիճակ կլինի, եթե Նախագահներն ընտրվեն 70-80 տոկոս ձայներով: Ընտրությունների նկատմամբ վստահության մասին շատ է խոսվում հիմա, ասենք ընտրությունից հետո առաջարկներ են հնչում ԸՕ-ն փոխելու՝ հոգեբանորեն փոխելով, էլ չգիտեմ ինչ պետք է փոխենք»: Մի բանի համաձայն էր՝ ընտրական հանձնաժողովները ձեւավորվեն, ընտրությունները կազմակերպվեն պետության կողմից. «Եվ չի լինի ընտրությունների հանդեպ վստահություն, քանի դեռ պատրվող կողմը չի ընդունել ընտրությունների արդյունքները»:

Թեեւ՝ Նախագահի համար ընդունելի են Եհսխով մոնիտորինգի հանձնաժողովի բանագնաց Ջոն Պրեսկոտի առաջարկները, հատկապես թիվ 1 առաջարկը՝ Սահմանադրական դատարանի վճիռն ընդունելու վերաբերյալ, մնացած կետերը հենց դրանից են կախված: Կալանավորվածների հանդեպ վերաբերմունքի մեղմացման հետ կապված էլ նկատեց, թե բոլորի հանդեպ հո գործ չի՞ հարուցվում՝ 800 բերման ենթարկվածներից կալանքի են վերցվել 100-ին մոտ անձիք, որոնցից միայն 40-50-ի նկատմամբ է հրեական գործ հարուցվելու եւ դատարան մտնելու. դատավարությունները բաց ու հրապարակային են լինելու եւ միայն դատավճիռներից հետո նորընտիր Նախագահը կարող է եւ գործադրել համաներման ինստիտուտը:

ՄԱԿ-ում ընդունված բանաձեւի, Մինսկի խմբի ձեւաչափի եւ դարաբաղյան խնդրի հանդեպ այս պահի մեր վերաբերմունքի մասին հարցին էլ այս պատասխանը ինչեց. «Եթե Արդբեջանը հրաժարվի բանակցություններից, չբացառվի, որ Հայաստանը կճանաչի ԼՂՀ անկախությունը: Հանենայնդեպս իմ քայլերն այդպիսին կլինեին, ասաց: Մինսկի խմբից ավելի լավ ձեւաչափ էլ չունենք, բայց եթե Արդբեջանը չի ուզում բանակցել, մենք հո չենք կաչելու: Ցեղ ուզում՝ պետք է ասեն, թե ինչ են ուզում, ու պետք է մտածեն, թե ում վրա է ընկնում հետագա պատասխանատվությունը»:

ԱՐԱՄ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Բնակարաններ՝ փախստականներին, աղետի գոտու անօթեւաններին եւ վթարային շենքերի բնակիչներին

Բնակչության բնակարանային կարիքների աղահովման մասին կառավարության ընդունած երկու նախկին որոշումներում կատարած փոփոխությունները երեկ ներկայացրեց քաղաքաշինության փոխնախարար Կառլեն Գեւորգյանը: Համաձայն այդ որոշումներից առաջինի, բնակարանների գնման վկայագրերի ծրագրի շրջանակներում, երկրորդ եռամսյակի համար հատկացված միջոցները կհեղափոխվեն առաջին եռամսյակ, իսկ երրորդ եւ չորրորդ եռամսյակներինը՝ երկրորդ եռամսյակ: Խոսքն, ընդհանուր առմամբ, 1 մլրդ 630 մլն դրամ միջոցների մասին է: Դրանցից 815 մլն դրամը նախատեսված է Արովյան քաղաքում բնակվող փախստականների բնակարաններ ձեռք բերելու համար, 815 մլն դրամը աղետի գոտու՝ Գյումրի քաղաքի անօթեւանների համար: Վերջինիս թվում նաեւ 100 մլն դրամի վկայագրերն էլ նախատեսված են Սոչիսակի 35 ընտանիքների համար:

Հաջորդը երեւան քաղաքում չորրորդ կարգի վթարայնության եւ քանդման ենթակա 9 շենքերում հաշվառված եւ փաստացի բնակվող բնակիչներին բնակարաններով ապահովելու որոշումն է: Կառլեն Գեւորգյանը հայտնեց, որ այդ շենքերում բնակվում են 141 ընտանիքներ, որոնք այս տարի կապահովվեն բնակարաններով: Այդ նպատակով կառուցվում են 4 նոր շենքեր: Տեղեկացվեց նաեւ, որ եւս մեկ այդպիսի շենք, որտեղ բնակվող 16 ընտանիքները կապահովվեն նոր բնակարաններով, կա Արմավիրի մարզի Ոսկեհաս համայնքում:

Ա. Մ.

Զոհված ազգային հերոսների ընտանիքներին՝ 200 հազար դրամ նպաստ

Կառավարությունը երեկ հաստատել է Հայաստանի՝ զոհված ազգային հերոսի ընտանիքի նպաստի վճարման կարգը: Համաձայն դրա, նպաստի չափը սահմանվել է 200 հազար դրամ: Հանձնարարվել է աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարին՝ 15-օրյա ժամկետում աղահովել զոհված ազգային հերոսների այրիներին եւ անչափահաս երեխաներին, ինչպես նաեւ նրանց խնամքի տակ գտնված ընտանիքի մյուս անդամներին ամենամսյա ընդհանուր դրամական օգնության վերաձեւակերպումը որպես Հայաստանի՝ զոհված ազգային հերոսի ընտանիքի նպաստ:

Ա. Մ.

Կալանավորվածները 106-ն են

ՀՀ հատուկ ինչական ծառայությունում հնչվող հրեական գործի շրջանակներում մարտի 19-ի դրությամբ կալանավորվել է 106 անձ, որոնց մեղադրանք է առաջադրվել ՀՀ հրեական օրենսգրքի տարբեր 4 հոդվածներով ու նրանց նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանքը:

Այդքանի զեմ-զինամթերք ձեռք բերելու եւ պահելու մեջ մեղադրվող Յուրիկ Մամյանի, Հուսիկ Բաղդասարյանի, Ավետիք Դոնբյանի, Սերյոժա Սիրադեղյանի եւ Հովհաննես Հարությունյանի վերաբերյալ մասերն անջատվել են առանձին վարույթ եւ ուղարկվել ԱԱԾ, որտեղ ավարտվել է նրանց մասով նախաքննությունը եւ մարտի 18-ին ուղարկվել են դատարաններ:

Եվս երեք մեղադրյալի՝ Գուրգեն Ալալանյանի, Արմեն Սովսիսյանի եւ Համլետ Հովհաննիսյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել ստորագրություն՝ չհեռանալու մասին:

Մարտի 19-ի դրությամբ հետաքննության մեջ են գտնվում 4 անձ՝ Նիկոլ Փաշինյանը, Խաչատուր Սուքիասյանը, Արմեն Վարդանյանը, Լեւոնուս Տոնոյանը, որոնց հայտնաբերելու ուղղությամբ իրականացվում են օպերատիվ-որոնողական աշխատանքներ:

ՄԱՐԻՆԵՍԻ ՄԱՍԵՐՅԱՆ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության 01 տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հանրապետության 47
Ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱՎՈՒՇ ԱՎԵՏԻՍՅԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՒՅՐ ՅԱՎՈՒՇՅԱՆ / հեռ. 529221
Գործադիր տնօրեն (գովազդ) / հեռ. 582960
Լուսագրության սենյակ / հեռ. 581841
Գովազդ, ծառայություն / հեռ. 582483
Շաբաթաթերթ լրահամար ծառայություն / հեռ. 529353
Գովազդային տարածք
«Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր ամբողջի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ առանց խմբագրութեան գրաւոր հաստատութեան խոտիւ արգելւում են հանձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
Գ տառով յոդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

Ռուսաստանը զորակցում է Հայաստանի ղեկավարությանը եւ կայունությանը

Գրիգորի Կարասին. ՈԴՆ հույս ունի, որ Մինսկի խմբի շեւաշափը կպահպանվի

Մարտի 18-20-ը Հայաստանում էր գտնվում Ռուսաստանի ոտեֆարտուղար, փոխարտգործնախարար Գրիգորի Կարասինը: Երեկ մեկնումից առաջ «Ամենիա-Մարիոթ» հյուրանոցում հայաստանյան լրատվամիջոցներին Կարասինը տեղեկացրեց, որ կարեւոր հանդիպումներ է ունեցել Հայաստանի ոտեական ղեկավարության՝ Նախագահի, վարչապետի, արտգործնախարարի հետ: Քննարկված լայն շրջանակի հարցերից Կարասինն առանձնացրեց երկկողմ հարաբերությունների համալիրը, որ կոչված է ակտիվ բնույթ, ուղղված է ապագային: Այդ հարաբերություններն ակտիվորեն զարգանում են հաղաքական, մշակութային, կրթության ոլորտներում: «Մի խոսով, մենք մնում ենք դաշնակից երկրներ եւ ուշադրությամբ ենք վերաբերվում մեր հարաբերությունների բոլոր ոլորտներին», նշեց ՈԴ ոտեֆարտուղարը:

Ըստ Կարասինի, քննարկվել է երկկողմ կարեւոր հաղաքական ժամանակացույցը ամենաբարձր մակարդակով: Առանձին թեմա են դարձել փետրվարի 19-ի նախագահական ընտրություններին հետեւած իրադարձությունները: «Ռուսաստանը միանշանակորեն անտարբեր չէ, թե ինչպես կձեւավորվի ներքաղաքական իրավիճակը մեզ բարեկամ երկրում: Մենք ելնում ենք նրանից, որ երկխոսությունը եւ իրավական դաշտը միակ հնարավորությունն են լուծելու հաղաքական խնդիրները, իսկ անկարգությունները եւ փողոցային քաոսը վտանգավոր երեւույթ են յուրաքանչյուր երկրի համար: Ես համոզված եմ, որ մարտի 1-2-ի իրադարձությունները Հայաստանի քաղաքացիներին ցույց տվեցին, թե որքան վտանգավոր կարող է լինել այդ ճանապարհը: Այն ոչ մի հարց չի լուծի, բայց երկիրը կբերի անկայունության, ապագայի անվստահության», հավաստիացրեց Գրիգորի Կարասինը:

Կարասինի հաստատմամբ, եւ Հայաստանի Նախագահը, եւ վարչապետը լավ են հասկանում եւ վերահսկում իրավիճակը, ունեն հստակ ծրագրեր նեղգրավելու կառուցողական ընդդիմությանը իրավական դաշտում հրավիրելու երկխոսության, եւ հույս հայտնեց, որ այս միտումը կգերակշռի եւ հայ հասարակություն կվերադառնան կայունությունը, կանխատեսելիությունը:

Ի վերջո, հայկական նոր ոտեականության կառուցումն, ըստ ՈԴ ոտեֆարտուղարի, անցել է այդ վտանգավոր փուլը եւ հիմա դուրս է գալիս հաղաքական բարեփոխումների, երկխոսության ուղուղի մի ճանապարհ:

Ղարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցային գործընթացի եւ զինադադարի խախտման մարտյան դեպքերի առնչությամբ Կարասինն ընդգծեց, որ կարգավորման գործընթացն առաջընթաց ունի, եւ կարեւոր է, որ հետսովետական տարածությունում այլ հակամարտությունների համեմատությամբ Հայաստանի եւ Ադրբեջանի ղեկավարների ջանքերով հանդիպումներ են տեղի ունենում՝ Մինսկի խմբի համանախագահների ակտիվ մասնակցությամբ: «Մեզ անհանգստացրին մարտի սկզբին ստեղծված գծում տեղի ունեցած իրադարձությունները: Լավ է, որ դրանք սահմանափակ բնույթ էին կրում եւ կանխվեցին ինչպես մի, այնպես էլ մյուս կողմից», կարեւորեց Կարասինը:

ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում Ադրբեջանի անցկացրած բանաձեւի կարգավորությամբ էլ Կարասինը հիշեցրեց, որ համանախագահող երկրները դեմ էին այդ նախաձեռնությանը, քանի որ գործընթացը նորմալ հունով է գնում: «Նմանօրինակ կտրուկ նախաձեռնությունները միջազգային կառույցներում, հատկապես այնպիսի հեղինակավոր, ինչպիսին ՄԱԿ-ի ԳԱ-ն է, ոչ մի դրական արդյունքի չեն բերի, ինչն էլ հաստատվեց իվեարկությամբ», հավելեց Կարասինը, հույս հայտնելով, որ գործընթացը կգնա նույն հունով՝ Մինսկի խմբի միջնորդությամբ ու շուտով տեղի կունենա Հայաստանի եւ Ադրբեջանի ղեկավարության հանդիպումը:

Ընդդիմության ներկայացուցիչների հետ հանդիպում չունենալն էլ Կարասինը հետեւյալ կերպ բացատրեց. «Մեզ բավարարում է այն ինֆորմացիան, որ տվեցին Նախագահը, վարչապետը, արտգործնախարարը: Տեղյակ ենք, թե ինչ են մտածում ընդդիմության ճամբարում. մենք ունենք այստեղ դեսպանատուն, բարեկամներ Հայաստանի հաղաքական եւ հասարակական կյանքի բոլոր ոլորտներում: Կարող եք չկասկածել, որ մենք տիրապետում ենք տարբեր տրամաչափի տեղեկություններին»:

ԷԼ. ՂԱՐԱԳՅԱԶՅԱՆ

Հայաստանից Ռուսաստան բեռնափոխադրումները Փոթի-Կովկաս լաստանավային երթուղով կիրականացվեն ղարգեցված ընթացակարգով

2008-ի փետրվարին ՈԴ կառավարության նախագահ Վիկտոր Զուբկովի՝ Հայաստան կատարած պաշտոնական այցի շրջանակներում հայկական կողմի հետ քննարկվել էին նաեւ մաքսային ոլորտին առնչվող հարցեր եւ առաջարկություններ, մասնավորապես երկու կողմերի փոխգործակցության ուժեղացման անհրաժեշտությունը՝ ակցիզային ապրանքների, հատկապես կոնյակի կեղծված խմբաքանակները բացահայտելու ուղղությամբ:

ՀՀ վարչապետը հանձնարարական էր տվել հետամուտ լինել արծրված հարցերի եւ առաջարկությունների հետ կապված աշխատանքների իրականացմանը:

Երեկ ՀՀ մաքսային պետական կոմիտեի նախագահի տեղակալ Գագիկ Խաչատրյանը եւ ՈԴ դաշնային մաքսային ծառայության պետի տեղակալ Լեոնիդ Շորնիկովը ստորագրեցին համաձայնագիր, ըստ որի՝ ղարգեցված ընթացակարգով, լաստանավի միջոցով կատարվելու են բեռնափոխադրումներ՝ մասնավորապես Փոթի-Կովկաս երթուղով, որոնցով արտահանողները ենթակացիզային ապրանքատեսակների համար եւ Ռուսաստանում, եւ Հայաստանում չանցնեն կրկնակի մաքսային զննություն:

Ռուսական կողմը ներկայացրել է «Կովկաս» նավահանգստի ենթակառուցվածքների առկա վիճակը եւ այն միջոցառումները, որոնք անհրաժեշտ են ՈԴ մաքսային օրենսդրությանը համապատասխան ոգելից խմիչքի մաքսային ներին տարանցիկ փոխադրումների գործընթացը, մաքսային ձեւակերպումներն ու հսկողությունն արդյունավետ կազմակերպելու համար:

Գագիկ Խաչատրյանը նշեց, որ ենթակացիզային ապրանքների բեռնափոխադրումները կատարվում են Նովոռոսիյսկի նավահանգստում, որը ձմռան ամիսներին եւ նախատնական օրերին մեծ կուտակումներ է առաջացնում՝ բնակլիմայական պայմանների եւ տրանսպորտային բեռնվածության հետ. «Ստորագրված համաձայնագրի մեջ արծրված են այն բոլոր հարցերը, որոնցով ղարգեցված ընթացակարգով, Կովկաս նավահանգստով՝ լաստանավի միջոցով, կատարվեն այդ բեռնափոխադրումները»:

Կողմերը քննարկել են նաեւ Հայաստանից Ռուսաստան եւ հակառակ ուղղությամբ ներկրվող ոգելից խմիչքի եւ դրանք տեղափոխող տրանսպորտային միջոցների վերաբերյալ նախնական տեղեկատվության փոխանակման, ապրանքների եւ տրանսպորտային միջոցների մաքսային վարչարարության մեթոդների կատարելագործման հարցում համագործակցության հեռանկարները: Պայմանավորվել են մեկ ամսվա ընթացքում տեղեկատվություն փոխանակել Հայաստանից Ռուսաստան եւ հակառակ ուղղությամբ ներմուծվող ոգելից խմիչքի, ինչպես նաեւ դրա ներմուծման ժամանակ ծագող խնդրահարույց հարցերի արագ կարգավորման վերաբերյալ: Վերջիններս պայմանավորվել են նաեւ խոշոր բեռների եւ դրանք տեղափոխող տրանսպորտային միջոցների մաքսային հսկողության հարցում համագործակցության վերաբերյալ, որը կներառի մաքսային զննման մեթոդների իրականացման գործում առկա երկու կողմերի փորձի փոխանակումը եւ այդ մեթոդների հետագա կատարելագործումը:

ՆԱՐԻՊԻ ՄԱՐԿՈՍՅԱՆ

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ

Հայաստանի տնտեսական աճը 10,1 տոկոս

Կշարունակվի՞ երկնիշ մնալ առաջիկայում եւս

2008-ի հունվար-փետրվարին Հայաստանի տնտեսական աճը կազմել է 10,1 տոկոս: Ըստ Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության տվյալների, այս տարվա առաջին երկու ամիսներին երկրի համախառն ներին արդյունքը կազմել է ավելի քան 221 մլրդ դրամ: Առավել մեծ աճ արձանագրած ճյուղը դարձյալ շինարարությունն է՝ 22,9 տոկոս: Արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալն աճել է 3 տոկոսով, իսկ առանց ադամանդի արտադրության՝ 4,3 տոկոսով:

Գյուղատնտեսության համախառն արտադրանքը հունվար-փետրվարին գրեթե մնացել է անփոփոխ՝ աճն այստեղ կազմել է ընդամենը 0,4 տոկոս: Ծառայությունների ոլորտում աճը կազմել է 11,8 տոկոս, իսկ մանրածախ առեւտրաշրջանառության աճը կազմել է 9,4 տոկոս:

Արտաքին առեւտրաշրջանառությունն ավելացել է 24,3 տոկոսով եւ կազմել 687 մլն դոլար: Առանց ադամանդի առեւտրաշրջանառությունն ավելացել է 28,9 տոկոսով եւ կազմել 645,8 մլն դոլար: Արտահանման ծավալներն ավելացել են 6,2 տոկոսով եւ կազմել 143,6 մլն դոլար: Առանց ադամանդի արտահանումն աճել է 9,3 տոկոսով եւ կազմել 123,5 մլն դոլար: Ներմուծումը կազմել է 543,4 մլն դոլար, աճելով 30,2 տոկոսով, իսկ առանց ադամանդի՝ 522,3 մլն դոլար, աճելով 34,6 տոկոսով:

Միջին ամսական աշխատավարձը Հայաստանում հունվարին կազմել է մոտ 84 հազար դրամ, մասնավոր հատվածում կազմել է 105 հազար դրամ, բյուջեայինում՝ 59 հազար դրամ:

Անշուշտ, փետրվարին եւ մարտին տեղի ունեցած ներքաղաքական իրադարձություններն իրենց ազդեցությունն են թողել նաեւ Հայաստանի տնտեսական զարգացման վրա, ինչը հավանաբար առաջիկայում զգալի կլա: Եվ եթե մինչ այժմ ներքաղաքական լարված իրավիճակն ու անկարգությունները նախաձեռնող քաղաքական շրջանակներն ու նրանց սպասարկող մամուլը Հայաստանի երկնիշ տնտեսական աճի ցուցանիշների մասին հեգնանքով էին խոսում, ապա առաջիկայում արդեն ուրախությամբ կասեն, որ երկնիշ տնտեսական աճ այլեւս չկա: Այսինքն, ինչքան վատ երկրի եւ ժողովրդի համար, այնքան լավ այդ շրջանակների համար:

Ա. Մ.

ԿԲ կողմից կառուցվող բաղադրյալ տնտեսական ինդեքսների վերաբերյալ

2005թ. թվականի սկզբից ՀՀ կենտրոնական բանկը նախաձեռնել է ոչ ֆինանսական, ֆինանսական կազմակերպությունների եւ տնային տնտեսությունների եռամսյակային հարցումներ: Հարցումների նպատակն է. (ա) գնահատել ներկա տնտեսական վիճակի փոփոխությունը նախորդ ժամանակաշրջանի նկատմամբ, (բ) գնահատել հետագայում սուբյեկտների տնտեսական սպասումները, (գ) հարցումների արդյունքների հիման վրա հաշվարկել եւ հրապարակել բաղադրյալ տնտեսական ինդեքսներ:

Ընթացիկ եռամսյակում ընտրանքային սկզբունքով հետազոտվել են արդյունաբերության, շինարարության եւ ծառայությունների ոլորտների 845 կազմակերպություններ: Հարցման են ենթարկվել նաեւ 1789 տնային տնտեսություններ երեւան քաղաքում եւ ՀՀ բոլոր մարզերում: Հարցումներն իրականացվում են ինտերնետի, հեռախոսակապի, նամակների եւ ֆաքսի միջոցով: Հարցումների արդյունքների հիման վրա հաշվարկվել են գործարար միջավայրի, տնտեսական ակտիվության եւ սպառողների վստահության ինդեքսներ: Գործարար միջավայրի ինդեքսը հաշվարկվում է որպես դրական եւ ընդհանուր տնտեսական վիճակի փոփոխությունների վերաբերյալ կազմակերպությունների գնահատականների միջինացման միջոցով, տնտեսական ակտիվության ինդեքսը՝ թողարկման ծավալների, արտադրանքի կամ ծառայությունների նկատմամբ պահանջարկի եւ պաշարների վերաբերյալ կազմակերպությունների սպասումների միջինացման միջոցով: Սպառողների վստահության ինդեքսը սացվում է ընթացիկ պայմանների ինդեքսի (նախորդ եռամսյակի համեմատ խոշոր գնումներ կատարելու, եկամուտների փոփոխության եւ ներկա տնտեսական պայմանների վերաբերյալ գնահատականների միջին) եւ ապագա պայմանների ինդեքսի (գալիք եռամսյակում գնումներ կատարելու, եկամուտների եւ զբաղվածության փոփոխության սպասումների միջին) միջինացման միջոցով:

Հարցերը կրում են որակական բնույթ եւ ունեն պատասխանների հետեւյալ տարբերակները. «աճել է», «մնացել է անփոփոխ», «նվազել է»: Պատասխանների հիման վրա հաշվարկվում է յուրաքանչյուր տարբերակի տեսակարար կշիռը պատասխանների ընդհանուր քանակում, այնուհետեւ դրական պատասխանների տեսակարար կշռին գումարվում է չեզոք պատասխանների կշռի կեսը՝ սանդղակելով պատասխանների հաշվեկշիռները: Վերջիններիս արժեքները տատանվում են 0-100 միջակայքում: Ընդ որում, 50-ից բարձր արժեքը ցույց է տալիս դիտարկվող երեւույթի դրական միտում, 50-ից ցածր արժեքը՝ բացասական միտում, 50-ը նշանակում է անփոփոխ իրավիճակ:

Բաղադրյալ տնտեսական ինդեքսների պատասխանների հաշվեկշիռները

Պատասխանների հաշվեկշիռներ	2006թ.				2007թ.				2008թ.
	1-ին եռ.	2-րդ եռ.	3-րդ եռ.	4-րդ եռ.	1-ին եռ.	2-րդ եռ.	3-րդ եռ.	4-րդ եռ.	1-ին եռ.
Գործարար միջավայր	58.3	57.1	53.1	47.8	57.8	56.6	50.9	46.9	50.5
Տնտեսական ակտիվություն	70.5	65.9	74.5	64.5	71.2	69.4	69.2	54.4	65.6
Սպառողների վստահություն	51.3	48.8	50.3	50.3	54.0	52.7	52.4	48.6	53.5

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ արդեն ձեւավորվել են բաղադրյալ տնտեսական ինդեքսների վերաբերյալ բավարար թվային շարքեր, ստորեւ ներկայացված են վերջիններիս արժեքները՝ հաշվարկած ինչպես նախորդ տարվա նույն եռամսյակի, այնպես էլ ընթացիկ տարվա երրորդ եռամսյակի նկատմամբ: Միեւնույն ժամանակ նշենք, որ նախորդ տարվա նույն եռամսյակի նկատմամբ հաշվարկված ինդեքսները տնտեսության փաստացի միտումները առավել ստույգ են բացատրում, քանի որ այստեղ բացառվում է սեզոնային տատանումների գործոնը: Այսպիսով, 2008թ. առաջին եռամսյակում բաղադրյալ տնտեսական ինդեքսներն են՝

	Նախորդ տարվա նույն եռ. նկատմամբ	Նախորդ եռ. նկատմամբ
Գործարար միջավայրի ինդեքս	87.4%	107.8%
Տնտեսական ակտիվության ինդեքս	92.1%	120.6%
Սպառողների վստահության ինդեքս	99.1%	110.3%

ԿԲ մամուլի ծառայություն

ԱԶԳԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Գաղտերի լռությունը

Հայաստանյան էլեկտրոնային լրատվամիջոցների միակողմանի լրատվության ֆոնին «Ազատությունն» օդադիտակայանը սովորաբար կատարում է հակակշռող դեր՝ ամբողջովին դաշտապանելով հակադիր բեւեռի տեսակետը: Թերեւս այդ դերն օգտակար նկատելիով, եթե գոյություն չունենար RFE/RL-ի, որի մեջ մտնում է «Ազատության» հայկական ծառայությունը, ամերիկյան կոնգրեսի կողմից հատկացված կանոնադրությունը, որի պահանջներից է ոչ միայն հավատի, այլեւ համակողմանի տեղեկատվություն ապահովելը: Դատելի իմներդ, միայն 1 օրում, ողբերգական մարտի 1-ին, «Ազատությունը» երեւանում տիրող վիճակի վերաբերյալ իր ուսկնդրին է հրամցրել 12 լուր, որոնցից միայն մեկն է պատշաճակամ (ոստիկանության մամուլի խոսնակ Սայաթ Շիրինյանի ասուլիսից) եւ միայն մեկն է չեզոք (Մայր աթոռի հանդարտության կոչը ժողովրդին), մնացած 10 լուրերը Լեւոն Տեր-Պետրոսյանի աջակիցների տեսակետներն են: Այսպիսով, փաստորեն, ի խախտումն իր իսկ կանոնադրության, «Ազատությունը» վերածվել է առաջին նախագահին ապասարկող մամուլի: Այս կապակցությամբ Panorama.am շաբաթահանդեսի մարտի 1-ի համարում իր տահեկան դիտարկումներն է արել գրող Վիոլետ Գրիգորյանը, որի հոդվածը արտատպում ենք նույնությամբ:

Խմբ.

Գիտենք, որ Հայաստանում էլեկտրոնային լրատվամիջոցների գերակայությունը հեռուստատեսությունն է, ինչպես նաեւ գիտենք, որ հեռուստատեսությունն ունի ինչպես դրական, այնպես էլ բացասական ազդեցություն: Դրական՝ եթե հեռուստաընկալողը գիտակցաբար ընտրում է ինչ դիտել, բացասական՝ եթե ընտրությունն ինքնաբերաբար է կատարվում: Ինչպես ասվեցավ, Հայաստանում հեռուստատեսությունը գերակայող է, բայց ոչ միակը: Ինչպես գրեցինք, Հայաստանում գործում է մի քանի հեռուստաընկալիչ, որոնցից ոչ մեկն ունի ազգաբնակչության ամբողջական ընդգրկում

«Թափանցիկ տեղական ինքնակառավարում»

Բերդկունքում ավելի ես տխրում մարդկանց բարությունից

Բերդկունքը Գավառի վարչատարածքի՝ բնակչության թվաքանակով ամենափոքր համայնքն է: Ամենափոքրն է դեռ խորհրդային տարիներից: Ու որոնցի գյուղը զարգանա ու շենանա, 1949 թ. այն միացրել են հարեւան Այրիվանք գյուղին (ներկայումս՝ Հայրավանք), առյա փոշմանել ու 1955 թ. կրկին առանձնացրել են: Երկրորդ անգամ գյուղն Այրիվանքին միացրել են 1967 թ., տարիներ հետո՝ 1991-ին, վերջին առանձնացրել են որոնց ինքնուրույն համայնք՝ Բերդկունք անունով:

Այս ամենի հետեւանքով ներկայումս համայնքը չունի դպրոց, որն ամենացավոտ խնդիրն է, համայնքապետարանը չունի վարչական շենք, մշակութային հասարակություն: 2006-07 թթ. ուսումնական տարում համայնքում գործել է տարական դպրոց, իսկ միջնակարգ կրթությունը համայնքի երեխաները շարունակել են Հայրավանքի դպրոցում: Բերդկունք-Հայրավանք միջհամայնքային ճանապարհի երկարությունը 4 կմ է, եւ տրանսպորտային կարի բացակայության պայմաններում երեխաների դպրոց գնալը, հատկապես ձմռան ամիսներին, շատ դժվար է: Համայնքային ենթակայության միակ՝ դպրոցի շինությունն օգտագործվում է համայնքային բոլոր կարիքների համար: Այդ թվում՝ որպես համայնքապետարան, ընտրությունների շրջանում՝ իբրեւ ընտրական տեղամաս ու իշխանության թեկնածուի նախընտրական շտաբ:

Դպրոցի՝ իր նոպաակին այլեւս չծառայող շինությունը 2006 թ. վերանորոգել է պետբյուջեի միջոցներով, ԱԺ պատգամավոր Հրանուշ Հակոբյանի ջանքերով: Նա նաեւ խոստացել է աջակցել դպրոցի կենսագործունեությունը համայնքում, սակայն 2007 թ.-ից նաեւ տարական դասարաններն են տեղափոխվել Հայրավանքի դպրոց: Ներկայումս դպրոցը չի գործում, իսկ համայնքի բնակիչները մտահոգված են անում շինության վիճակը՝ նայած եւ ինքներդ դատեք, թե ինչ է մնացել 7 մլն դրամ արժողությամբ վերանորոգումից:

Համայնքի բնակիչներն իրենց գյուղի զարգացման հիմնական խոչընդոտը համարում են հարեւան համայնքի հետ միացնելը: Դրա հետեւանքով էլ այսօր դպրոց, մանկապարտեզ, ակումբ, համայնքապետարանի շենք չունեն: Չեն զարգացել համայնքային ենթակառուցվածքները: Ու եթե ներկայումս էլ խոսակցություններ կան, թե զարգացում ապահովելու համար հնարավոր է համայնքների խոշորացում, բերդկունքցիները, ելնելով իրենց դասը կենսավիրաից, դա համարում են խիստ սխալ եւ անարդյունավետ տարբերակ: Համայնքապետարանի հավատարիմ Նորիկ Թադեւոսյանը որպես օրինակ նշում է նաեւ Հացաշատ եւ Արծվաբեր գյուղերը Գավառ քաղաքին թարմաների ձեւով միացնելու պատմությունը, որից շահել է միայն վարչական կենտրոն հանդիսացող Գավառը: Բերդկունքի պատգամավոր էլ շահել է Հայրավանքը՝ տարիների ընթացքում ձեռավորելով գործող ենթակառույցներ: Միացման արդյունքում նաեւ խորհրդային տարիներին երիտասարդ ընտանիքներին տնատեղ հատկացվեցին Հայրավանքից, ինչի արդյունքում իրենց բնակիչն այսօր դարձել է այլ համայնքի բնակիչ: Դպրոցի՝ Հայրավանքում գտնվելու հանգամանքը նույնպես նպաստել է հարեւան համայնքի տեղափոխվելուն:

Ցնայած համայնքի բազում խնդիրներին՝ 1991 թ. համայնքն ունեցել է 234, իսկ այժմ՝ 288 բնակիչ, 78 տնտեսություն: Իսկ մինչ այդ, դեռեւս խորհրդային տարիներին, գյուղի բնակչության թիվն անհամեմատ մեծ է եղել: Այստեղ ապրել են նաեւ ադրբեջանցիներ: Մարզկենտրոն Գավառից Բերդկունքը գտնվում է 12 կմ հեռավորության վրա, Սեւանա լճի ափին: Սակայն, ի տարբերություն մեր դիտարկած ճամբարակի վարչատարածքի Շորժա համայնքի, լճին մոտ գտնվելը դրական որեւէ ներգործություն չի ունենում համայնքի զարգացման վրա: Լիճը ցանկապատված է, եւ համայնքի բնակիչներն առանց մուտքավճարի չեն կարողանում մոտենալ լճին: «Անգամ լողալ չենք կարող, ավելի լավ է այնտեղ առաջ չլիներ, հավնեցես չեռեր»,- դժգոհում են բերդկունքցիները:

Լճին մոտ գտնվող համայնքներում վերջին տարիներն հոլեկներն ամառանոցներ են գնում: Բերդկունքում նույնպես ամառանոց հոլեկներ լինում են, սակայն համայնքը ժամանակավոր բնակիչներ ունենալու այս հանգամանքից նույնպես որեւէ կերպ չի շահում: Համայնքը գտնվում է բարձրադիրային գոտում եւ, ըստ էության, իրական ամառը 15-20 օր է տեւում, հետեւաբար մարդիկ իրենց հանգիստն անցկացնելու համար ափամերձ այլ տարածքներ են որոնում:

2007 թ. ընթացքում «Սեւան» ազգային պարկը դասական հայցով վիճարկել է համայնքի՝ ափամերձ տարածքում ունեցած հողերի սեփականության հարցը: Դասական տարբեր այցերում վիճահարույց հարցը լուծվել է հօգուտ «Սեւան» ազգային պարկի: Համայնքի ներկայացուցիչները գոհ չեն կայացված որոշումից, բայց անիմաստ են համարում հարցի հետագա քննությունը: Ունեն անօգտագործելի հողեր, որոնց նշանակությունը փոխելու եւ հողերն օտարելու հարցով համայնքը դիմել է կառավարությանը, սակայն միաժամանակ տարակուսանքի մեջ են՝ իսկ եթե «Սեւան» ազգային պարկը նորից գանգատարկի՝ հողերի սեփականության հարցը: «Մի՞թե ճգտված չեն ազգային պարկի սահմանները»,- հարցին համայնքի ղեկավար Բաբկեն Դադիկյանը պատասխանում է, որ սահմանները ճգտված չեն, «Սեւան» ազգային պարկն իր կառավարման տարածքն է համարում լճից տկոսով»: Հողի հարկի հավաքագրման աշխատանքներում նպատակահարմար չեն գտնում դիմել դատարան, հանի որ մարդիկ վճարունակ չեն: Հողի հարկ չվճարողներին զգուշացնում են միայն ծանուցագրերի միջոցով եւ բանավոր եղանակով:

Հողի հարկի ապառքների բեռից ազատումը համայնքի ղեկավարը տեսնում է մեկ ճանապարհով՝ աստիճանաբար, տարիների ընթացքում մարելու միջոցով: Տարիներ առաջ նաեւ մարդկանց թյուրիմացության մեջ են գցել, թե պետությունը ուր որ է գիջելու է ապառքները, ինչը նույնպես նպաստել է ապառքների կուտակմանը: Իսկ այժմ մարդիկ գիտակցում են, որ դա անհնար է, եւ իրենք պետք է փորձեն մուծել եւ չկուտակել հետագա պարտեր: Թեեւ Բերդկունքի բյուջետային սուղ հնարավորություններն առիթ են շատ խոսուն են, սակայն 2007 թ. գործունեության առանցքային անելիքների մասին հարցադրում ենք հղում համայնքի ղեկավարին: «Ինչ ենք արել որ: Օգնություն ենք բաժանել ժողովրդին, ցուցակով, վերջացրել ենք»,- նշում է նա: Օգնությունները եղել են պարարտանյութի, սերմացուի, ծառի տնկով, իսկ ցուցակները տրամադրել է Գեղարքունիքի մարզպետարանը: Նաեւ «Գազ 3102» մակնիշի ավտոմեքենա են ձեռք բերել համայնքապետարանի համար:

Սակայն համայնքը ֆինդային բյուջեում ունի տնտեսված 1 մլն 200 հազար դրամ գումար, որը ցանկանում են 2008 թ. օգտագործել գյուղտեխնիկա ձեռքբերելու նպատակով, ինչի կարիքը շատ են զգում:

Համայնքի բնակիչները համայնքապետարան դիմում են հիմնականում օգնության, նուխ անջատելու դիմումներով: Սակայն ներկա պահին գյուղի բնակիչների ամենամեծ խնդիրը խմելու ջրի մատակարարումն է: Համայնքում միայն 5 տնտեսություն ջուր ունի, հանի որ «ջուրը նատրով չի մղվում», որի հետեւանքով խողովակները սառչում են: Համայնքի բնակիչ Արշակ Նազարյանը վրդովված ասում է, որ բազմիցս զանգահարել է ջրամատակարարող ընկերություն եւ իր բողոքն անձամբ հայտնել է կազմակերպության ղեկավարին, սակայն արդյունքի չեն հասել: Միեւնույն ժամանակ համայնքի տնտեսությունները չեն հրաժարվում ջրի վարձ մուծելուց: Համայնքի ղեկավարը նման մոտեցումը թշնամություն է համարում, հանի որ համայնքի բոլոր տնտեսությունները ջրաչափեր են տեղադրել, որոնք հիմա առեղն սառած կլինեն, հետեւաբար նրանց հետագա շահագործումն էլ գուցե անհնար դառնա:

Բերդկունքում ապրելն անհետաքրքիր է: Երիտասարդությունը չգիտի ինչով զբաղվի եւ ձգտում է մի հնարով հեռանալ գյուղից: Հենց մի ծանոթի հեռախոսահամար են գտնում, անմիջապես իրենց վիճակի մեջ փոփոխության ելք են որոնում, փորձում են աշխատանք գտնել հանրապետությունից դուրս: Ինչպես համայնքի ղեկավարն է նշում, մարդիկ մի բերահավաքի հույսին են ապրում, որը մեկ ամիս է տեւում, սակայն բերահավաքն էլ չսկսված՝ դիզելային վառելիքի, բենզինի եւ անգամ խոտի հակի թելի գները բարձրանում են, իսկ առանց ծախսեր անելու բերահավաքի հնարավոր չէ իրականացնել: Համայնքն ունի 242 հա վարելահող, 40 հա խոտհարք եւ 220 հա արոտավայր: Համայնքի բնակիչները, սակայն, չեն կարողանում օգտագործել արոտավայրերը, հանի որ արոտավայր հանդիսացող տարածքները գտնվում են վարելահողերի մեջտեղում, որոնք օգտագործելու դեպքում անասունները կտրորեն իրենց իսկ ցանած ու վարած հողերը: Համայնքում ընդամենը 1 տնտեսություն է հրաժարվել սեփականաշնորհված հողից: Զբաղմունքի մյուս տեսակն էլ անասնապահությունն է:

Բերդկունքը դեռեւս չի հասցրել 2008 թ. իր բյուջեն: Հաշվարկների, ճշտումների եւ իրավական բյուջե ճշակելու նպատակով այդ գործընթացը դեռ ձգձգվում է: Սակայն, ինչպես հանրապետության շատ ու շատ համայնքներում, այնպես էլ Բերդկունքում, բացի համայնքապետարանի գործունեության հետ առնչվող մարդկանցից, համայնքի մյուս բնակիչներին բոլորովին էլ չի հետաքրքրում՝ որքանն է իրենց համայնքի բյուջեն, ինչպես է բյուջեի նախագիծ ճշակվում, ենթարկվելու՞ է այն, թե՞ ոչ, հանի որ մարդիկ չեն սպասում, թե համայնքային բյուջեն կարող է որեւէ կերպ փոխել իրենց կյանքի որակը: Առավել իրազեկված եւ ակտիվ բնակիչները վարանում են դիմել տեղական իշխանություններին, հետաքրքրվել համայնքային բյուջեին վերաբերող հարցերով, թե՞ ոչ: Իսկ եթե ճիշտ չընկալվեն: Եվ այս պարագայում բնավ կարի չունի, թե որքան է նախատեսված համայնքի բյուջեն:

Բոլոր նրանք, ում հետ հաջողվեց զրուցել Բերդկունքում, այնուամենայնիվ լավ տպավորություն են թողնում, որ չես կարողանում չտխրել, թե ինչու՞ մեր երկրի այս փոքր համայնքներից մեկում, որը բնավ եզակի չէ իր խնդիրներով, մարդիկ այսքան դժվար են ապրում:

Բերդկունքի դպրոցը ծառայում է որպես համայնքապետարան, ընտրությունների ընթացքում՝ իբրեւ ընտրական տեղամաս ու իշխանության թեկնածուի նախընտրական շտաբ:

ԼՈՒՍԻՆԵ ՔՈՉԱՐՅԱՆԸ

Արարատ

«Քիչ վերահսկող ունենք, հիմա էլ բնակչությունը տիտի մեզ վերահսկի»

Ասում է Մարմարաշենի համայնքապետը

Առաջինը, որ աչքի զարնեց Արարատի մարզի Մարմարաշեն գյուղում, վարչապետ, նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանի նախընտրական մեծ պաստառն էր համայնքապետարանի ճակատին, որն օրենսդրորեն անթույլատրելի է: Համայնքապետ Էդվարդ Հակոբյանն այդ մասին լավ գիտեր եւ, իմանալով հանդերձ, նախագահի թեկնածու Ս. Սարգսյանի նախընտրական շապիկ էր: Շապիկն էլ, կարծես թե, համայնքապետարանում էր: Նախագահի թեկնածու վարչապետի առաջիկա այցի հետ այս գյուղում մեծ հույսեր էին կապում: Համայնքապետը ցաւագրեց, որ առիթն անհայտանալ օգտագործելու են՝ վարչապետի աջակցությունը խնդրելու գյուղում մուր-մանկապարտեզի նոր շենքի կառուցման համար, որը, ըստ նախագծա-նախահաշվարկային տվյալների, արժենալու է 170 մլն դրամ: Օրերս տեղեկացան, որ համայնքապետին հաջողվել էր վարչապետից խոստում կորզել: Դա բոլորովին էլ զարմանալի չէր, հանգի այս համայնքապետն, ի տարբերություն շատ-շատերի, այդ պաշտոնը զբաղեցնում է արդեն 21 տարի: Եվ, որպես տեղական ինքնակառավարման գործընթացի նախաձեռնություններում կանգնած մարդ, վերջին ինքնակառավարման առաջին տարիները, պայմանավորված 90-ականների անցումային ժամանակահատվածով, բնորոշեց որպես անիշխանության, անկառավարելիության, օրենքների չգոյության տարիներ:

Հիմա, համայնքապետ Էդվարդ Հակոբյանի ներկայացմամբ, ինքնակառավարման առումով ամեն ինչ իր տեղն է ընկել: Գյուղում հանձնաժողով կայունություն է, ինչն, ըստ նրա, պայմանավորված է գյուղացիների զբաղվածությամբ. «Աշխատում են երեւանում կամ իրենց հողերն են մշակում»: Գյուղի հիմնական զբաղմունքը հողագործությունն է: Ոմանք էլ դրա հնարավորությունը չունեն, մեկնել են արտագնա աշխատանքի: «Արտագաղթ ներկայումս էլ կա, բայց ոչ 90-ական թվականների չափով»,- բացատրում է համայնքապետը:

Մարմարաշենն ունի 370 հա հողաբաժին, որի հիմնական մասը վարելահող է, մնացածը՝ պտղատու եւ խաղողի այգիներ: «Վարելահողը ոչվարությամբ են մշակում: Եկամուտ չկա: Մի հանի տարի առաջ գյուղում մինչեւ 220 հա ցորեն են մշակել, հիմա ամբողջ գյուղում հազիվ 20 հա ցորեն է ցանվում: Մնացած 200 հա-ի կեսն ընդհանրապես չեն մշակում, չեն կարողանում մշակել: Այս առումով անմխիթար վիճակ է»,- խոստովանում է համայնքապետը: Հողերն անմշակ թողնելու հետեւանքով հողի հարկը հավաքագրելու հետ կապված խնդիրներ են առաջանում: Այդուհանդերձ, 2007 թ. կարողացել են հողի հարկի գրեթե 90%-ը հավաքագրել: Մարմարաշենում, համայնքապետի ասելով, հաշվարկային հողի հարկը մեկ տարում կազմում է 5.5 մլն դրամ, բայց, որպես կանոն, բյուջեում նախատեսվում է 7 մլն դրամի հավաքագրում՝ հույս ունենալով մասամբ հավաքագրել նաեւ նախորդ տարիներից մնացած պարտքը:

Համայնքապետը պարտքերի կուտակումը բացատրում է մարդկանց անվճարունակությամբ: «Հրաժարվողներ չկան, պարզապես չունեն, որ տան: Տույժ ու տուգանք չենք կիրառում, առավել եւս՝ դատական չենք դիմում»,- ասում է համայնքապետը՝ չմանրամասնելով, թե այդ դեպքում ինչ միջոցների են դիմում հարկերը հավաքագրելու համար: Մարմարաշենի 2007 թ. վարչական բյուջեն կազմել է 28 մլն 280 հազար դրամ, կատարել են 28 մլն 382 հազար: Ընդհանուր բյուջեն 41 մլն 795 դրամ է, որից 18 մլն դրամը եղել է պետության տված դոտացիան: Համայնքապետարանը պարտքեր չունի: Ավելին, վարչական բյուջեում ունեցել են 4.5 մլն դրամ գումար, որը տեղափոխվել է ֆոնդային բյուջե: Որպես կանոն՝ ամեն տարի բյուջեում շուրջ 2 մլն դրամ նախատեսում են սոցիալական հատկացումների համար: Օգնում են սոցիալապես անապահով ու վիրավոր ազատամարտիկների ընտանիքներին, պատերազմի վետերաններին: Անցած տարվա բյուջեում ուսանողների վարձավճարների համար նախատեսել են 400 հազար դրամ, որոշակի գումար հատկացրել են թաղման ծախսերին (յուրաքանչյուր դեպքում՝ 40-50 հազար դրամի չափով), որոշ գումար էլ՝ բուժման ծախսերի համար (20-30 հազար դրամի չափով): Ընթացիկ օգնությունն էլ տրամադրում են 10-30 հազար դրամի չափով:

Բյուջեի ճնշարկումը, համայնքապետի ներկայացմամբ, առվում է բաց ու թափանցիկ՝ մեկ շաբաթ առաջ իրազեկում են ավագանու անդամներին: Քննարկմանը պարտադիր մասնակցում են նաեւ համայնքապետարանի աշխատակիցները: Բայց համայնքի բնակչությանն ավագանու նիստերի, «ճնշարկումների» մասին չեն իրազեկում, հայտարարություն չի արվում: «Քիչ վերահսկող ունենք, հիմա էլ բնակչությունը պիտի մեզ վերահսկի»,- մեր դիտողությանը հեգնանքով պատասխանում է նա: Թերեւս այդ տրամաբանությամբ էր համայնքեսն անհրաժեշտ թողել տարեկան բյուջեի ճնշարկմանը մասնակցելու մեր գրավոր ցանկությունը: Ինչեւէ, այս տարվա բյուջեն արդեն հաստատվել է, եւ մեզ տրամադրված օրինակի ուսումնասիրությունը որոշ հոդվածների մասով ծանրելու տեղիք է տալիս:

Մասնավորապես, համայնքի ավագանին համայնքապետ Էդվարդ Հակոբյանի առաջարկով 2007 թ. միաձայն որոշել էր «գյուղի սոցիալապես անապահով» որոշ բնակիչների՝ թվով 15 անձանց, ազատել գույքահարկից: Բարեգործությունն, իհարկե, վատ չէ, բայց համայնքապետը ոչ մի փաստաթղթով կամ փաստակով չի հիմնավորել նրանց սոցիալապես անապահով լինելը:

Մեկ տարվա ընթացքում երեք անձանց, մեկին՝ նպիրավորության իրավունքով, երկուսին՝ անվարձահատույց, սեփականության իրավունքով, հողամասեր են հատկացրել: Այս անգամ համայնքապետը նշել է, որ նրանք կարիքավոր են եւ նախկինում ոչնչաչափ հողամաս չեն ստացել: Բոլոր դեպքերում էլ ավագանու անդամները հարցի վերաբերյալ տեսակետ չեն արտահայտել, ինչը դարձյալ մտորելու տեղիք է տալիս համայնքապետի արդարացիության առումով: Բացի այդ, հիմնավորում չկա, թե ինչու՞ է նրանցից մեկին 400 քմ հողամաս հատկացվում, մյուսին՝ 1500 քմ, մեկ ուրիշին՝ 1000 քմ: Մինչդեռ, եթե ավագանու նիստի օրակարգը եւ կայացրած որոշումները հրապարակվեին, գյուղացիները կամա-ակամա մասնակից կդառնային անցուդարձին եւ անկախ իրենցից կվերահսկեին համայնքապետի ու ավագանու գործողությունները: Այդ դեպքում համայնքի ղեկավարը հարկադրված կլիներ առաջարկված նախագծին փաստաթղթային հիմնավորումներ կցել:

Համայնքապետի ներկայացմամբ՝ եթե պահուստային ֆոնդի հողերից գնելու ցանկություն է լինում, այն օրենքի տարին համապատասխան ներկայացնում են ածուղ-վաճառքի՝ նախապես այդ մասին թերթում հայտարարություն տալով (սա օրենքի պահանջն է, առանց որի կադաստրը գրանցում չի կատարում): Սակայն, գյուղում այդ մասին «ոչ մի խոսք», համենայնդեպս, հայտարարություն չի լինում: Եվ չնայած էդվարդ Հակոբյանը հավաստիացրեց, թե իրենց համայնքում ածուղ-վաճառքով տարեկան իրացվում է 1000-2000 քմ հողամաս (1 քմ հողի կադաստրային արժեքը կազմում է 810 դրամ, ածուղ վաճառքի համար ավագանին որոշում է նվազագույնը՝ 50%), համայնքապետարանի տեղեկանքով 2007 թ. Մարմարաշենում իրացվել է ավելի քան 2.5 հա հողաբաժին, որից մուտքը կազմել են 8 մլն 31 հազար դրամ: Այսինքն՝ իրացված յուրաքանչյուր 1000 քմ համար վճարվել է 1000 դոլարից փոքր ավել: Մինչդեռ գյուղի կենտրոնում 1000 քմ հողամասն արժե 15-20 հազար դոլար, իսկ ծայրամասային ամենաէժան հողակտորն արժե 3 հազար դոլար: Գնողները հիմնականում գյուղացիներն են:

Անդրադառնալով համայնքապետարանի կատարած աշխատանքներին՝ համայնքապետը տեղեկացրեց, որ նոր թաղամասերն ապահովվել են խմելու ջրով, համենայնդեպս, ներին ցանցը շահագործվել է: Սակայն խմելու ջրի հետ կապված լուրջ խնդիրներ ունեն գյուղը: Մի կողմից՝ խմելու ջրի մատակարարումը շատ անկանոն է, մյուս կողմից՝ հանքում գյուղացիներից: Գյուղում որոշ թաղամասեր ընդհանրապես խմելու ջուր չեն ստացել եւ, բնականաբար, ջրի վարձ չեն տվել: Ցածրին սնտեսությունն էլ դատարան է դիմել՝ յուրաքանչյուր սնտեսությունից պահանջելով նվազագույնը 150 հազար դրամ: Գյուղացիները ծանուցագիր ստացել են, բայց դատարան չեն ներկայացել: Դատարանն էլ վճիռը կայացրել է հօգուտ դիմողի: Հիմա ՊԱՀԿ-ն գյուղացիներից այդ գումարներն է պահանջում: «Ցոմուտը լավ էլ տեղյակ է, որ այդ մարդիկ ջուր չեն ստանում: Այդ հարցը բազմիցս է բարձրացվել ամենատարբեր ատյաններում: Ոչ մի արդյունք: Եռամսյակը մեկ Մարմարաշեն գյուղից 5-10 հոգու ջրի համար դատարան են կանչում: Ես Մասիսի ջրմուղի պետին բազմիցս ասել եմ այդ մասին, բայց նա պատճառաբանում է, որ դա իր գործառույթներից դուրս է, ինը վեռադաս ունի»,- դժգոհում է համայնքապետը:

Նշենք, որ համայնքապետարանն այս հարցում չի կատարել օրենքով իրեն վերապահված կարեւոր գործառույթներից մեկը՝ համայնքի բնակիչների շահերի պաշտպանությունը: Համայնքապետը, խնդրին լավատեղյակ լինելով, իրավաբանական օգնության առաջարկ չի արել բնակիչներին կամ նրանց իրավունքները դատարանում պաշտպանելու միջոցներ չի ձեռնարկել: Եվ իրավական գիտելիքներից զուրկ բնակիչները դատարան չներկայանալը հարցի լուծում են համարել:

Հուլիս-օգոստոս ամիսներին, ի թիվս մարզի այլ գյուղերի, Մարմարաշենը նույնպես լուրջ խնդիրներ է ունենում ոռոգման ջրի հետ կապված: Լինում են տարիներ, երբ ջուր չսանալու պատճառով մարդկանց բերքը փչանում է: 2005 թ. գետնի տակից հանել-տարել են ոռոգման ջրի հսկա խողովակները (թե ովքե՞ր, համայնքապետը չհայտնեց), ինչի հետեւանքով գյուղի 100 հա հողատարածք դարձել է անջրդի: Երկար պայքարից հետո հողատերերը փակել են մայրախողովը հարավին կապող մայրուղին, որից հետո նախկիններն համեմատ շատ փոքր տրամագծի խողովակներ են տեղադրել, բայց այսօր էլ այդ տարածքում կան հողակտորներ, որտեղ ջուրը չի հասնում: Համայնքապետարանը, թերեւս հաշվելով կատարվածի հետ, հարցի լուծումն այն է համարել, որ նմաններից հողի հարկ չի գանձում: Իսկ կառավարությունը գյուղի ներտնտեսային ցանցի վերականգնումը ներառել է «Հազարամյակի մարտահրավերներ» ծրագրում: Գյուղում 85 հազար դոլարի ներդրում պետք է կատարվի:

2007 թ. գյուղում բազմաթիվ աշխատանքներ են իրականացվել: Մասնավորապես վերականգնել են գարնանային վարուցների հետեւանքով փլված գյուղամիջյան կամուրջը, որի համար համայնքապետարանը մոտ 1 մլն դրամ է ծախսել: Գյուղի բուժամբուլատորիայի շենքը վթարային վիճակում է: Սոցիալական ներդրումների հիմնադրամի միջոցներով այն պետք է այս տարի հիմնովին վերանորոգվի: Համայնքն իր հասանելիք 10 % գումարն արդեն փոխանցել է: 100 երեխայի համար մուր-մանկապարտեզի շենքի շինարարության նախագծա-նախահաշվարկային փաստաթղթերի պատրաստումն արժեցել է 5 մլն դրամ, որը հատկացվել է համայնքի բյուջեից: Գործող մանկապարտեզի շենքը վթարային է եւ, ցեղուգծամբ պայմանավորված, ձմռան ամիսներին չի աշխատում: Ծրագրվում է առաջիկայում գազիֆիկացնել գյուղի նոր թաղամասերը:

Գյուղի համար, ի թիվս մյուս առաջնահերթությունների, կա նաեւ փողոցների լուսավորության հարցը: Եվ չնայած նրան, որ համայնքապետարանն առայժմ միջոցներ չի հատկացնում գրաղարանը նոր գրքերով համալրելու համար, այդուհանդերձ, գյուղին 1000 կտոր գրականություն են նվիրել: Իսկ գյուղին արված ամենամեծ «նվերը», համայնքապետի գնահատմամբ, նորակառույց եկեղեցին է, որի օծումից հետո գյուղի երիտասարդները մի փոքր հանդարտվել են, այլապես մինչ այդ չափից դուրս տարայնության համար այս գյուղը «Չեչնիա» էին անվանում:

ՆԱՐԵԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱԶԳ-ՆԵՐԴԻՐ

Արարատ-Լոռի

Արարատի քաղաքապետարանը հարկերը գանձելու լուրջ մեթոդներ է կիրառում

Արարատի մարզի Արարատ քաղաքի քաղաքապետ Աբրահամ Բաբայանը քաղաքապետի պաշտոնը սանձնել է 2007 թ. հուլիսի 4-ին: Նրա ներկայացմամբ՝ նախկին քաղաքապետն իր գործունեության ընթացքում հասցրել էր հսկայական պարտքեր կուտակել: Միայն աշխատավարձի եւ սոցիալական հակացումների գծով պարտքը հասել էր 32-33 մլն դրամի: Քաղաքապետարանը չէր կատարել հիմնարկ-ձեռնարկությունների նկատմամբ ժամանակին սանձնված պարտավորությունները: Պրն Բաբայանի ասելով՝ ընտրվելուն պես սիրտված է եղել դիմել հանրապետության վարչապետի օգնությանը, որն էլ, ընդառաջելով իր խնդրանքին, Արարատ քաղաքին որպես օգնություն հատկացրել է 40 մլն դրամ: Այդ գումարով կարողացել են զրոյացնել աշխատավարձերի եւ սոցիալական հակացումների պարտքերը: «Այսօր մարդիկ կանոնավոր աշխատավարձ են սանձում»,- ասում է համայնքապետը, բայց եւ հրաժարվում մեկնաբանել, թե ինչպե՞ս է այդչափ պարտք կուտակվել՝ «անցյալին չեմ ուզում անդրադառնալ»:

Պարզ է, որ պարտքերը կուտակվել էին ոչ միանգամից, տեւական ժամանակամիջոցում: Յուրաքանչյուր տարի քաղաքապետարանը փակել էր «պոչերով», եւ հաջորդ տարում դրան ավելացել էին նորերը: «Պատասխանատվությունս օրվանից ձեռնամուխ եմ եղել դրանց կրճատմանն ու քաղաքը կարգի բերելուն»,- ասում է պրն Բաբայանը: Վերջինս, խոսելով համայնքի 2007 թ. բյուջեի մասին, նշեց, որ այն մուտքային մասով 265 մլն դրամ էր, որը, մեղմ ասած, խիստ անիրատեսական էր: Նրա ներկայացմամբ՝ մի քանի ամիս զբաղված են եղել գույքահարկի եւ հողի հարկի առումով ճշտումներ կատարելով, քանի որ բյուջեում լուրջ անճշտություններ են եղել, այդուհանդերձ, մինչ օրս չեն կարողացել բազաները վերջնականապես կարգի բերել: «Թվեր էին գրված, որ իրական չէին կարող լինել: Օրինակ՝ ավտոմեքենաների գույքահարկի մասով նախատեսվել էր 33 մլն դրամ հավաքագրում: Փաստացի գանձումը կազմել էր ընդամենը 11 մլն դրամ: Համապատասխան կազմակերպություններից պահանջեցինք անհրաժեշտ փաստաթղթերը եւ պարզվեց, որ հսկայական թվով մեքենաներ ընդհանրապես գոյություն չունեն, դրանց մի մասը 10-15 տարի առաջ վաճառվել եւ հաղթի բալանսից դուրս էր գրվել: Նման անհամապատասխանությունները բազմաթիվ էին»,- ասաց քաղաքապետը:

Որքան էլ զարմանալի է, այս քաղաքը ոչ մի հեկտար հող չունի: Նույնիսկ քաղաքի հեռանկարային զարգացման համար ոչ մի թիզ հող չեն թողել: Այստեղ է գտնվում ցեմենտի գործարանը, քաղաքում բավականաչափ մաքր ու միջին բիզնեսի օբյեկտներ կան, սակայն գործարարները բավականին մեծ թիվ են կազմում: Քաղաքապետի ներկայացմամբ՝ այստեղ «շոգեքարշը» ցեմենտի գործարանն է, մնացածն աշխատատեղերի եւ ենթակառուցվածքների առումով գրեթե հարց չեն լուծում: Ունեն նաեւ կրի արտադրություն, ոսկու գործարան, որն արդեն տեսական ժամանակ է չի աշխատում: Քաղաքապետի ասելով՝ ցեմենտի գործարանը հարկային պարտավորությունների առումով էապես բարեխիղճ է: «Բյուջեի մասով էլ իրենց պարտավորությունները էապես պարտաճանաչ են կատարում»:

Քաղաքին աջակցություն ցուցաբերելու համար քաղաքապետը ստեղծել է «Քեզ, արարատցի» բարեգործական հիմնադրամը: Բարեգործական գործունեությունից բացի՝ այն քաղաքի զարգացման ծրագիր է իրականացնում: Այս հիմնադրամից է ֆինանսավորվում բարեգործական ճաշարանը, որտեղ օրական մեկ անգամ սնվում են քաղաքի 98 անապահով ծերերը: Քաղաքապետը հատկապես վաստակում այն փաստից, որ մինչեւ իր ընտրվելը ծերերի բարեգործական ճաշարանը, ի թիվս այլ կազմակերպությունների, ֆինանսավորել էր նաեւ արտասահմանյան մի կազմակերպություն: Շնորհակալությամբ հրաժարվել էր վերջիններիս աջակցությունից: «Մի քաղաք չի՞ կարող օրական մեկ անգամ 100 ծեր կերակրել, որ դրա համար էլ ենք սպասում դրսի աջակցությանը: Բոլորովին պատվաբեր չէ»,- ասաց նա:

Աբրահամ Բաբայանը բավականին գոհ է քաղաքի ավագանուց. «Իհարկե, բոլորը չէ, որ իրենց տեղում են, բայց կան մարդիկ, որոնք ե՛ւ ենթակառուցվածքներ են հասկանում, ե՛ւ բյուջե: Շատերն էլ խիստ զարգացավ վերաբերմունք են դրսեւորում քաղաքի նկատմամբ»: Մեր դիտողությանը, թե՝ եթե բանիմաց են, առավել եւս՝ զարգացավ, ինչպե՞ս բացատրել նրանց անտարբերությունը, որի արդյունքում քաղաքը հայտնվել է ոչ այնքան ցանկալի վիճակում, քաղաքապետն ասաց, որ, իր ունեցած տեղեկություններով, ավագանու նիստեր հազվադեպ են տեղի ունեցել, հիմնականում սառագրություններ են դրվել: «Այսօր ավագանու բոլոր անդամները մեկ մարդու նման ներկայանում են թե հերթական, եւ թե արտահերթ նիստերին: Ստիպված ենք հաճախակի նիստեր գումարել, որովհետեւ անելիք էապես կա: Ընդ որում, հաճախ գումարում ենք ավագանու ընդլայնված նիստեր քաղաքի հիմնարկ-ձեռնարկությունների պետերի, դպրոցների տնօրենների, գլխավոր բժշկի, միլիցիայի եւ այլ պատասխանատուների մասնակցությամբ»,- տեղեկացրեց քաղաքապետը:

Պրն Բաբայանի ներկայացմամբ՝ այս տարվա բյուջեն արդեն ավելի «գորեղ» է եւ ամեն մի ենթակա ձեռնարկության համար առանձին գումար են նախատեսել, մի բան, որ անցած տարվա բյուջեում չկար: Եվ, որ ամենակարեւորն է, այն իրատեսական բյուջե է: Սակայն քաղաքապետարանի համար լուրջ խնդիր է նախորդ տարիների հարկերը հավաքագրելը: Դրա համար էլ իրավաբան են վարձել, որը հիմնականում զբաղվում է այդ գումարները գանձելով, ընդ որում, ոչ միայն աղտոտներով, այլեւ ընթացիկ հարկերով, տուգանքներով, որոնք ուղեկցվում են դատական գործընթացներով: Պրն Բաբայանի համոզմամբ այսօր մարդիկ կան, որոնք ոչ թե փող չունեն, այլ՝ մուծելու ցանկություն: «Այս ընթացքում համոզվեցի, որ կան ցինիկ պահվածք դրսեւորողներ, որոնք վճարունակ են, բայց հասարակում հրաժարվում են վճարելուց: Նման դեպքերում հարցերը պետք է լուծվեն միայն դատական կարգով: Իսկ ընդհանրապես այս ամիսների ընթացքում հավաքագրումները բավականին նորմալ են ընթացել, դրա համար էլ առայժմ հարկերի հավաքագրման առումով դատարան չենք դիմել, բայց առաջիկայում այդ ուղղությամբ էապես ակտիվ կաշխատենք»:

Քաղաքապետն առավել կարեւորեց այն, որ քաղաքը նոր շունչ է առել, եւ բնակչությունն սկսել է հավատալ, որ մոտ ապագայում այն տեսքի է գալու: Բյուջեի միջոցներով արդեն բավականին ասֆալտապատում են կատարել, քաղաքի համարյա բոլոր բարձրահարկերի տանիքները մասնակիորեն վերանորոգել են, եւ քանի որ Արարատի 60%-ը բնական գազ չունի, դիմել են կառավարության օգնությանը եւ գազաֆիկացման հարցն են լուծում: Մագիստրալ խողովակաբերը քաղաքապետարանի միջոցներով տարվել են եւ ավելի բարակ խողովակներով միացվում են տեղերին: Կառուցվել է հիվանդանոցի տարածքում գտնվող դիահերձարանը, որը չի գործել 1971 թ.-ից: Կիսով չափ վերականգնվել են քաղաքային այգին, քաղաքային ամֆիթատրոնը: Քաղաքային 4 մանկապարտեզները, արվեստի եւ երաժշտական դպրոցները, որ քաղաքապետարանի ֆոնդում են, պայմանավորված ջեռուցման բացակայությամբ՝ չեն գործել, բայց, քաղաքապետի ասելով, այս տարվանից դրանք գործարկելու բոլոր հիմքերը ստեղծվել են:

Ինչ վերաբերում է հանրապետության գրեթե բոլոր քաղաքների համար անլուծելի աղբահանությանը, այս քաղաքում բոլորովին վերջերս, քաղաքապետարանի ենթակայությամբ, ստեղծել են նոր կոմունալ ծառայություն, քանի որ նախորդ ծառայությունը նախկին քաղաքապետը սեփականաշնորհել է: Անցյալ տարի մարզերի զարգացման ծրագրով Արարատ քաղաքին կառավարության հատկացրած 20 մլն դրամի մի մասը քաղաքապետարանը պատրաստվում է ուղղել քաղաքի կանաչապատմանն ու աղբահանության համար տեխնիկա ձեռք բերելուն: Քաղաքապետը տեղյակ էր, որ առաջիկայում ընտրահամալսարանական գումարները միանգամից պետք է փոխանցվեն տեղական բյուջե, որը հնարավորություն կտա էապես փոխել քաղաքի էկոլոգիական վարքագիծը: Այդուհանդերձ, նշեցի, որ այդ թեմայով խոսում են գրեթե 10 տարի:

Խոսելով առաջիկա ծրագրերի մասին՝ քաղաքապետը նշեց, որ այս տարի համայնքային բյուջով 4-5 հազար քմ ասֆալտապատում են իրականացնելու, 15 հազար քմ մայթ են սալիկապատելու, գազոնները են կանաչապատելու, քաղաքի բարձրահարկ շենքերի մուտքերն են կարգի բերելու:

Հ. Գ. **Արարատի քաղաքապետ Աբրահամ Բաբայանը մեր զրույցի սկզբում նշեց, այնուհետեւ հեռախոսային զրույցում վերահաստատեց, որ նախորդ քաղաքապետից ժառանգված աշխատավարձերի շուրջ 40 մլն դրամի պարտքը իր ընտրվելուց անմիջապես հետո մարել են վարչապետի օգնությամբ, որը գումարը հատկացրել է կառավարության ֆոնդից: Մեզ չհաջողվեց գտնել դրա վերաբերյալ վարչապետի կամ կառավարության կայացրած որոշումը: Ի վերջո, տարածքային կառավարման նախարարության պատասխանատուները պարզաբանեցին, որ Արարատի ցեմենտի գործարանը բավականին պարտքեր է ունեցել քաղաքին, որը վարչապետի միջամտությունից հետո մարել են: Ստիպված ենք բացատրությունն ընդունել ի գիտություն, սակայն անհրաժեշտ ենք համարում կրկին ընդգծել, որ քաղաքապետը ցեմենտի գործարանի հետ իրենց ունեցած հարաբերությունների մասին խոսելիս հատուկ շեշտեց, որ ցեմենտի գործարանը խիստ պարտաճանաչորեն է կատարում իր հարկային պարտավորությունները:**

ՆԱՐԵԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Խմբագրության կողմից-*Այս հրապարակման երկրորդ ոչ պակաս կարեւոր բացահայտումը մեզ համար այն է, որ Արարատի մարզում կա համայնք, տվյալ դեպքում՝ Արարատ քաղաքը, որը 40 մլն բյուջեային պարտք է ունեցել: Մինչդեռ, Տարածքային կառավարման նախարարությունը ամիսներ առաջ «Հետքին» տված հարցազրույցում հայտնել էր, որ Արարատի մարզը միակն է, որտեղ ոչ մի համայնք բյուջեային պարտք չունի: Գուցե այն պատճառով, որ այս մարզում պարտքերը մարվում են կառավարության ֆոնդից արված հատկացումներով:*

«Թոշակի ու նպաստի բարձրացումով աղքատությունը չի վերանա»

Փախստականներով բնակեցված Լոռու մարզի Մեծ Այրում համայնքում, որի մեջ մտնում է նաեւ Փոքր Այրում գյուղը, փետրվարի 19-ի նախագահական ընտրություններին 283 ընտրող տրանցել եւ հաղթող է դարձվել Սերժ Սարգսյանը: Համայնքապետ Սաշիկ Առուբանյանը, որը նաեւ Սերժ Սարգսյանի նախընտրական շտաբի պետն է եղել, բացատրեց, որ այրումցիները Սերժ Սարգսյանին իրենց ընտրությունները տվել են, որովհետեւ նա ՀՀ կառավարության միջոցներից 29 մլն դրամ է հատկացրել համայնքի գազաֆիկացման համար: «Աշխատանքները դեռ նոր են սկսվել, եղանակը խանգարում է աշխատանքներին»,- ասաց համայնքապետը: Փախստական Վայիկ Միրզոյանը, որը սկզբում խուսափում էր ձայնագրիչից, հանկարծ պոռթկաց. «Դլա միացրու, մրամ թե դրանցից եմ վախենում, ոչ մեկին էլ չեմ ընտրել: Որ գիտեմ իմ ընտրելով չի, նեանակվիլ տեն, էլ խի՞ եմ ընտրում»: Դեռ զրոյված հասաստեց. «Բա նեանակված ա, չէ՞ ընտրվա՞ ա»:

Համայնքի մուտքի դաշտերի մոտ հավաքված մի խումբ այրումցիներ նույնպես դառնացած ասացին. «Իհարկե, Սերժն է ընտրվել»: Համայնքապետ Սաշիկ Առուբանյան հայտնեց, որ համայնքի բնակչության թիվը 1,114 է, որի 98%-ը հայերի դեպքերի հետեւանքով 1989 թ. Բաքվից ու Կիրովաբադից մազապուրծ հայ փախստականներ են: Մեծ Այրումն ունի 410 փախստականներ են: Մեծ Այրումն ունի 410 փախստականներ եւ որոնք ապրում են հայերի մոտ: Հողը սեփականաշնորհվել է համայնքի հայ փախստականներին: Սակայն քաղաքացի փախստականները սոցիալական ծանր վիճակի եւ գյուղատնտեսական անհրաժեշտ գիտելիքներ չունենալու հետեւանքով չեն կարող հողին: Սաշիկ Առուբանյանը, որը նույնպես փախստական է, Մեծ Այրումի առաջին համայնքապետն է եղել, 1999 թ.-ից հետո վեց տարի համայնքապետ չի եղել, մեկ էլ համայնքապետ է ընտրվել 2005թ.:

Աղքատ են ապրում այրումցիները: «Մեծ Այրումն ու Փոքր Այրումն էս շրջակայքի գյուղերից 30 տարի ետ են, մեր Ճոնկան, Շնող, տարբերությունը կզգաք: ՀՀ կառավարությունից անտեսված փախստական ժողովուրդ են, ամենքն իրենց համար, ո՛չ տեր կա, ո՛չ՝ տիրական»,- ասաց Մեծ Այրումի բնակիչ Սահակ Նազարյանը: Իր ապրելակերպի մասին փախստական Վայիկ Միրզոյանը նեղսրտած ասաց. «Ո՛չ փող ունեմ, ո՛չ՝ հող»: Այրումցիները թոշակով ու նպաստով են ապրում, հողով զբաղվող չկա: «Որ գյուղը գյուղատնտեսությամբ չզբաղվի, գյուղացին ինչո՞վ կապրի»,- ասաց Սահակ Նազարյանը: Սաշիկ Առուբանյանը հայտնեց, որ գյուղում 45 նպաստառու եւ 120 կենսաթոշակառու կա: Նա նաեւ ասաց, որ նախկին համայնքապետը համայնքի 70 հա պահուստային եւ հողից հրաժարված փախստականների 30 հա հողերը 25 տարի ժամկետով վարձակալությամբ տվել է քաղաքից ու հարեւան համայնքներից եկած մարդկանց: «Ես հողերը վարձակալության չեմ տվել, ասել եմ՝ մեր ժողովուրդն էսօր հնարավորություն չունի, վաղը կունենա, պահուստային ֆոնդը պահել եմ, որ մասաղ սերունդը մեծանա, նրանց էլ հող տանք, հիմա մեծացել են, չենք կարող նրանց հող տալ, իսկ այդ հողերը 25 տարի չենք կարող ետ վերցնել»:

Ինչպես համայնքապետը, այնպես էլ գյուղացիները հայտնեցին, որ Մեծ Այրումում մեծ հողատարածքներ է տնօրինում Լոռու նախկին մարզպետ Հենրիկ Քոչինյանի եղբայրը՝ Հովհաննես Քոչինյանը. «Նա մի 14 հա առած, մի 30 հա էլ վարձակալությամբ վերցրած հող ունի,- ասաց համայնքապետը եւ վաս հարկատու լինելու համար դժգոհեց Հովի. Քոչինյանից.- հողի վարձակալության 400 հազար դրամ պարտք ունի»: Գյուղացիները հայտնեցին, որ Մեծ Այրումում փախստական հողատերերը դեռեւս չեն կարողանում մշակել իրենց հողը: «Ես գյուղի տակտորիստն եմ, ամենանացանի համար ամենը վարել եմ փախստականներին պատկանող հազիվ 3 հա վարելահող, մի 5 հա իմ վարելահողերից եմ վարել, մնացածը՝ ինչ որ տեսնում եք, Հ. Քոչինյանի եւ Լոռու մարզպետարանի մի քանի աշխատողների վարելահողերն են»,- ասաց Սահակ Նազարյանը:

Պարզվեց, որ Մեծ Այրումի համայնքային բյուջեում 2007 թ. հարկային եկամուտների հավաքագրման գործում լուրջ դժվարություններ կան: Ճշտված բյուջեով 2007 թ. պլանավորված 12 մլն դրամ եկամուտներից տարեվերջին փաստացի մուտքը կազմել են 6,8 մլն դրամ: Համայնքապետարանն անբավարար է կատարել սեփական հարկային եկամուտների հավաքագրումը՝ նախատեսված 7,3 մլն դրամի դիմաց այն կազմել է 3 մլն դրամ, հողի հարկի հավաքագրումը 6,7 մլն դրամի դիմաց կազմել է 2,9 մլն դրամ: Բյուջեին հարկատուների պարտքը կազմում է 2,4 մլն դրամ: Մեծ Այրումում իմիջանցքակ են պլանավորվում բյուջեի ծախսերը: Օրինակ՝ 2008 թ. բյուջեում պլանավորված 13 մլն դրամ եկամուտներից 12 մլն դրամը համայնքապետ Ս. Առուբանյանը նախատեսել է նպատակաուղղել տեղական իմիջանցքավարման աղբարան պահպանմանը, այն դեպքում, երբ համայնքի բյուջեն 2008 թ. հունվարի 1-ի դրությամբ ունի 2,8 մլն դրամ աշխատավարձի պարտք, համայնքապետարանի հաստիքային ցուցակն ընդգրկում է 15 հաստիքային միավոր: Մինչդեռ համայնքապետարանի անգործունեա աշխատակազմում կարելի է համայնքապետի հետ պահել եւս 3 հաստիքային միավոր, իսկ մնացած գումարները նպատակաուղղել գյուղի մանկապարտեզի վերագործարկմանը, որը կարող է լավագույն նվերը լինել գյուղին:

Վերջինիս տիպային շենքը, ինչպես հայտնեց համայնքապետը, չօգտագործվելու հետեւանքով ուղղակի քանդվում է: Բյուջեն, սակայն, գյուղացիների առաջին հոգսը չէր: Նրանց առավել մտահոգում էին հողի մշակման եւ գյուղացիների աղքատության վերացման խնդիրները: Բաքվից փախստական Նաստյա Մուսայելյանն ասաց, որ իր սեփականաշնորհած 1 հա հողը վաճառել է, թեեւ գյուղի հողը հարուստ է, գյուղում ոռոգման ջուր չկա, ջահել տղերքը բանակից գալիս են, դրա պատճառով հողը չեն կարողանում մշակել, փախչում են Ռուսաստան: «Խմելու ջուր չկա, մի քանի օրը մեկ անգամ են տալիս, ոչ ոք էլ չի ստուգում խմելու ջրի վիճակը»,- ասաց Կիրովաբադցի փախստական Լեւոն Սարգսյանը: Սոյարակ Պողոսյանն էլ հավելեց. «Մի մարդու էքը հլե հուռակ է բերում, ասում են՝ էլ նպաստ չի հասնում»:

«Մեր պետությունը պետք է հասկանա, որ թոշակի ու նպաստի բարձրացումով աղքատությունը չի վերանա, 20 հազար դրամ են տալիս, իրենցից կախվածության մեջ պահում, բող նպաստ չտան, բող օգնեն հողը մշակենք»,- ասում է Սահակ Նազարյանը: Նա դժգոհեց նաեւ գյուղացուն տվող պետական վարկերից ու հարկերի տույժերից. «Մեկ տարով վարկ են տալիս, դեռ հասցրած չես լինում բերդ ծախես, տոկոսերը կուտակվում են: Ասված չարած՝ կարկուտ էլ տալիս է, մի տարի 10 հա սիմինդ ունեի, կարկուտը 2 վայրկյանում արեց, տարավ: Գյուղացուն խեղդողն էնքան հարկը չի, ինչքան հարկը ժամանակին չվճարելու համար սահմանված տույժը: Ես էս տարի հնարավորություն չեմ ունենում հողը մշակելու, էդ ինչի՞ ես տույժ դնում, 100 հազար հարկին 200 հազար տույժ է գալիս»: Մեծ Այրումի գյուղացիները կարծում էին, որ իրենց չլուծվող ցավերի մեղավորը Լոռու մարզպետարանն է: «Սերժն ի՞նչ գիտի՝ Հայաստանում Մեծ Այրում գյուղ կա»,- ասում էին գյուղացիները:

ԼԻԼԻԹ ՓԱՐԵՍՈՒՄՅԱՆ

Սոլակում գազատարի վթարը տարեց կնոջը զրկեց կյանքից

Փետրվարի 15-ին Կոտայքի մարզի Սոլակ գյուղում բնակվող 82-ամյա Արեւհաս Գալստյանի հարազատները լուր ստացան, որ կենցաղային գազի հետեւանքով տանը պայթյուն է եղել, եւ տանտիրուհին այրվածքներ է ստացել: «Վեր ա կացել, որ գազը վառի, միանգամից գմփացել ա: Մենք եկանք, լրիվ վառված էր, տանն էլ ոչ մի բան չէր մնացել օգտագործելու»,- պատմեց դուստրը՝ Առախյա Գալստյանը:

Պայթյունի մասին տեղյակ են եղել թե՛ համայնքապետը, թե՛ «ՀայՌուսգազարդ»-ի ներկայացուցիչները: Սակայն «մեծ աղմուկ» չեն բարձրացրել, հանի որ այրված են եղել ընդամենը Ա. Գալստյանի ձեռքերը: Հարազատները խոստովանեցին, որ իրենք էլ կարծել են, թե պատճառը ծեր կնոջ անփութությունն է եղել: Համայնքապետարանի աջակցությամբ շատ արագ վերանորոգվել է տունը, այնտեղ են տեղափոխել Արեւհաս Գալստյանին, իսկ դուստրը, խորն ու թոռը մնացել են նրա մոտ՝ հիվանդին խնամելու:

Ա. Գալստյանի վերքերը դեռ չէին լավացել, երբ երկրորդ պայթյունը տեղի ունեցավ: «Առավոտ շուտ ասաց՝ մուտում եմ: Վեր կացա, ոլիտան վառեցի, 5 րոպե չէր անցել՝ միանգամից կայծակի նման խփեց»,- պատմեց դուստրը: Այս անգամ արդեն գազի պայթյունից տուժել էր 4 մարդ: Այրվել էր նաեւ տան կահ-կարասին:

Երկրորդ պայթյունի մասին լուրն էլ շատ շուտ հասել էր համայնքապետարան եւ սոցստակող ծեռնարկություն: «Գազի գրասենյակից եկան, ասեցին՝ «լեվի գիծ» ունեմ: Խոսակցություններից հետո ուզում էին դուրս գալ, երբ Ռուբիկը (ներկայացուցիչը) ասաց՝ սպասեմ, մի անգամ էլ ստուգեմ: Թուղթը վառած ամբողջ տան մեջ ման եկավ: Հասավ վերջին սենյակը, ու բոցը մի անգամից խփեց»,- պատմեց Ա. Գալստյանի դուստրը:

Արեւհաս Գալստյանը մահացել է գազատար խողովակի վթարի պատճառով

Այդ ամենից հետո միայն «ՀայՌուսգազարդի» աշխատակիցները ենթադրություն էին արել վթարների իրական պատճառի մասին: Տանից 5 մ հեռավորության վրա՝ փողոցով այն կողմ, մոտ 2 մ խորության վրա գետնի տակով անցնում է գազի խողովակը, որը գազ է մատակարարում ավելի քան 250 սնտեսության: Ամենայն հավանականությամբ, այն վնասվել էր, եւ այլ ճանապարհ չունենալով՝ գազը դուրս էր եկել Ա. Գալստյանի տան՝ փողոցի հարեւանությամբ գտնվող պատի ճեղքից ու ներս լցվել: Մեզ այստեղ բացատրեցին հարազատները:

«ՀայՌուսգազարդ» ՓԲԸ «Կոտայք գազ» ԳԳՄ պետ Գագիկ Փիլիպոսյանը չժխտեց, որ վթարի պատճառը վնասված խողովակն է եղել: «Գազատարների 70 %-ն այսօր անցնում է գետնի տակով, որը ցանցը հնարավոր չէ վերգետնյա անել»,- բացատրեց Գ. Փիլիպոսյանը՝ նշելով, որ Սոլակը 20-30 տարի առաջ է գազիֆիկացվել, բնականաբար, խողովակները հին են, սակայն իրենք պարբերաբար ստուգումներ են իրականացնում: «Վթարից 10 օր առաջ մասնագետները ստուգել են, ոչ մի բան չկար: Այն ժամանակ չի եղել, բայց 5 օր առաջ եղել է: Ես հո Նոստրադամուսը չեմ»,- ասաց պետը՝ խողովակի վթարը «հիմնավորելով» տարբեր հանգամանքներով:

Վթարված գազատար խողովակից արտաքնված գազը տեւական ժամանակ լցվել է Ա. Գալստյանի տունը

Գազատարի ստուգումների մասին համայնքապետ Բաղալ Սարգսյանը ոչինչ չհիշեց, բայցեւ չբացառեց այն: Միաժամանակ նշեց. «Մենք չենք իմացել, բայց գոնե էդ թաղի բնակիչները կիմանային»: Երկրորդ պայթյունից հետո համայնքապետն անձամբ էր «ՀայՌուսգազարդի» տեղի մասնաճյուղին դիմել, ներկայացրել հիվանդների վիճակը: «Ասացի՝ մարդիկ վաս վիճակում պառկած են, գոնե նյութական աջակցություն ցույց տվեք, իրենք թե՝ մենք ոչ մի բան էլ չենք տալիս, տարեք հիվանդանոց, ինչ ծախսեր կլինի՝ մենք կանենք»,- պատմեց Բ. Սարգսյանը:

Համայնքապետն անձամբ էր 4 տուժածներին հիվանդանոց տեղափոխել, սակայն հաջորդ օրը Արեւհաս Գալստյանը հիվանդանոցում մահացել էր: Մահվան հիմնական պատճառը, ըստ բժշկական եզրակացության, փիրս-թոքային անբավարարությունն էր, սակայն այն պայմանավորված էր նաեւ դեմքի, նախաբազուկների, դաստակների ու սուլմների 1-ին, 2-րդ եւ 3-րդ կարգի այրվածքներով: Դաստր խոսքով՝ մայրը դեռ մի քանի տարի կապրեր, եթե այդ երկու՝ միմյանց հաջորդող ցնցումները չլինեին: Դա նաեւ բժշկի գնահատականն էր եղել:

Թեեւ «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ «Կոտայք գազ» ԳԳՄ պետի հետ հանդիպման ժամանակ մեզ արդեն հայտնի էր, որ մահվան անմիջական պատճառն այրվածքները չեն եղել, սակայն վերջինս երեւի թե ինքնապաշտպանության նպատակով որոշեց հայտարարել, թե «էդ կինն արդեն մահամերձ էր, ու հարազատներն էլ կողին էին նրան հրաժեշտ տալու նպատակով»: Ասվածին հակադրվեց համայնքապետը. «Մենք կարող էինք էդպես ասել, եթե էդ մարդը տանը առողջ պառկած է եղել: Ես զրուցել եմ հետը, նորմալ վիճակում ա եղել: Նրա վիճակը վատացավ երկրորդ պայթյունից հետո»:

Փետրվարի 19-ին, առավոտյան 7.30 սահմաններում տեղի ունեցած գազի պայթյունի հետեւանքով, Արեւհաս Գալստյանը, դուստրը՝ Առախյա Գալստյանը, խորը՝ Մայրանուշ Գալստյանը եւ թոռը՝ Հովհաննես Բոզինյանը ստացան տարբեր աստիճանի այրվածքներ: Այրվեց տան կահ-կարասին, հագուստները: Թեեւ առայժմ նախնական է տարվում, սակայն արդեն ուրվագծված է վթարի պատճառը՝ վնասված գազատար: «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ «Կոտայք գազ» ԳԳՄ պետին այս պատմության մեջ ավելի շատ զայրացրել ու մտահոգել է Արեւհաս Գալստյանի հարազատների՝ վնասները փոխհատուցելու «չափազանց մեծ պահանջները»: «Տունն ու արտանը թանկ են գնահատում»,- ասաց նա: Այդ իսկ պատճառով վերջինս որոշել է տուժածներին ձեռ մեկնել միմիայն դատարանի կայացրած վճռից հետո:

ՄԵՐԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Նոր կարգը բարդացրել է մեքենաների տեխզննումը

ՀՀ կառավարությունը հանրապետության տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործը 2008 թ. հունվարի 7-ից ՀՀ ոստիկանության տարածային բաժինների ՃՊԾ-ներից հանձնել է ՀՀ կապի եւ տրանսպորտի նախարարությանը, որն էլ այն սկսել է իրականացնել մրցութային կարգով հաղթող ճանաչված կազմակերպությունների միջոցով:

Առկունում ծառայությունը կենտրոնացվել է հանրապետության մարզկենտրոններում՝ հնարավոր սահմանաձեռ համայնքների տրանսպորտային միջոցներ ունեցող բնակիչների համար ստեղծելով դժվարություններ: Այս եւ այլ ծառայություններ Վանաձորում կենտրոնացնելու կապակցությամբ ակնհայտ դժգոհություններ կան Լոռու մարզի Թումանյանի տարածքային համայնքների եւ Ալավերդու բնակչության շրջանում:

«Օրերս մեր կազմակերպության ավտոպարկի վարորդների ցուցակը ստորագրեց ՀՀ ոստիկանության 2-րդ սպայական գումարակի 5-րդ սպայական վաշտի Ալավերդու ջոկատի հրամանատար Դավիթ Կիրակոսյանը, բայց գործությունը կնքելու համար ստիպված Ալավերդուց տարանք Վանաձոր: Բնականաբար, դա ավելորդ ժամանակ եւ ֆինանսական միջոցներ խլեց մեզանից, մինչդեռ ցանկացած ծառայություն արդյունավետ է, եթե այն կատարվում է արագ, էժան եւ որակով, որը, ցավոք, մեզանում դեռեւս չի արժեւորվում: Ինչ վերաբերում է տրանսպորտային միջոցների տեխզննումը Ալավերդուց Վանաձոր տեղափոխելուն, կարծում եմ՝ սահմանաձեռ Ջիլիզայից կամ թեկուզ հենց Ալավերդուց տրանսպորտային միջոցներն այդ նպատակով Վանաձոր հասցնելը մարդկանց պարտադրում է լրացուցիչ ծախսեր, որը չի խոսում ադեկատ բնակչության նկատմամբ ծառայությունը մատուցողի բարոյական վերաբերմունքի մասին, մանավանդ որ ավտոմեքենա կամ այլ փոխադրամիջոց ունենալը հայաստանում դեռեւս նյութական ադեկվատության երեւույթ չէ»,- ասաց ԴՈՍԱՖ-ի Ալավերդու տարածային կազմակերպության նախագահ Գառնիկ Իսրայելյանը:

ՀՀ կապի եւ տրանսպորտի նախարարության տրանսպորտային միջոցների տեխզննության մրցութային հանձնաժողովը մրցույթին մասնակցող ծառայություններ մատուցող կազմակերպություններին հաղթող ճանաչելիս ակնհայտորեն հաշվի չի առել բնակչության՝ արդյունավետ եւ որակյալ ծառայություն ադեկվատ ստանալու պահանջը, մինչդեռ լուսավոր միջոցներով (տես՝ «Հայաստանի Հանրապետություն» եւ «Առավոտ» օրաթերթերը, 18.01. 2008թ.) բնակչությանն օպերատիվ կերպով տեղեկացրել են տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության սակագների մասին:

Մրցույթի հաղթող կազմակերպությունների ու նրանց հիմնադիրների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու մեր հարցումներին ՀՀ կապի եւ տրանսպորտի նախարարության լրատվական ծառայությունը հրաժարվեց պատասխանել: «Մենք իրավունք չունենք հիմնադիրների ազգանունները հրապարակելու»,- ասաց ծառայության աշխատակցուհին:

Լոռու մարզպետարանի տրանսպորտի եւ ճանապարհաշինության բաժնի պետ Վարդան Գետրգյանը մարզում տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության հետագա գործունեության մասին զրուցելիս նախ պահանջեց անջատել ձայնագրիչը, ապա ամբարտավան տոնով ասաց, որ մրցույթին Լոռու մարզպետարանը չի մասնակցել, քանի որ դրա իրավունքը պատկանում է ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարությանը, մարզում տրանսպորտային միջոցների տեխնիկական զննման իրավունքը մրցութային կարգով շահել է «Սիարվի» ՍՊԸ-ն, որի տնօրենի անունը, ըստ Վարդան Գետրգյանի, Վիկտոր Պետրոսյան է:

Մեր՝ «Ի՞նչ են, արդյոք, մարզում երջանկանվող այն լուրերը, որ «Սիարվի» ՍՊԸ-ն պատկանում է ՀՀ գյուղատնտեսության նախարար Դավիթ Լոիյանին», հարցը հավասարակշռությունից հանեց Վարդան Գետրգյանին: Միայն ձայնագրիչն անջատելուց հետո նա հանգստացավ եւ ասաց. «Ավտոմեքենաների պետհամարանիշերն էլ են համայնքների վարորդները Վանաձորից ստանում, եթե, ասենք, ածն խարդում մի հատ օվիր լիներ, ձիշտ կլինեն՝,- հարցրեց նա եւ շարունակեց,- պահանջվող շատ թանկ տարվորություններն ածն տեղ հնարավոր չէ դնել, այդ պատճառով ծառայությունը կենտրոնացված է Վանաձորում»:

Թե մարզում քանի՞ հավատարված տրանսպորտային միջոց կա, եւ ինչպե՞ս է դրանց տեխնիկական զննությունը նախատեսում իրականացնել «Սիարվի» ՍՊԸ-ն, մարզպետարանի տրանսպորտի եւ ճանապարհաշինության բաժնի պետը տեղյակ չէր: Վանաձորում դեռեւս շատերը չգիտեն «Սիարվի» ՍՊԸ-ի գրպսենյակի հասցեն: Հարցումներից պարզվեց, որ ՍՊԸ-ի գործադիր տնօրենը ոչ թե Վիկտոր Պետրոսյանն է, ինչպես հայտնեց Լոռու մարզպետարանի տրանսպորտի եւ ճանապարհաշինության բաժնի պետ Վարդան Գետրգյանը, այլ Վոլոդյա Լոիյանը, որի ազգակցական կապը ՀՀ գյուղատնտեսության նախարար Դավիթ Լոիյանի հետ, թերեւս, ակնհայտ է:

Պարոն Վ. Լոիյանը մեր հեռախոսազրույցի ընթացքում խուսափեց հայտնել «Սիարվի» ՍՊԸ-ի գրասենյակի հասցեն, սակայն ասաց, որ ՍՊԸ-ն աշխատում է 2008 թ. հունվարի 17-ից: Հիմնադիրների մասին խնդրեց չհարցնել: «Հիմնադիրները Ձեզ հետաքրքիր չեն, դա հրապարակելու բան չէ, մարդիկ ստեղծել են, մենք էլ աշխատում ենք»,- նեղսրեց նա ու բացատրեց, որ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննման թանկ կայանը լիցենզիայով են շահել, Լոռու մարզի առանձին տարածքներում ծպսնաձրտեր բացելը դեռ երկու տարի հնարավոր չէ, 2008 թ. էլ հասաս չի լինի: Թե մարզում քանի՞ տրանսպորտային միջոցի է սպասարկելու «Սիարվին», գործադիր տնօրենը դարձյալ տեղյակ չէր: Ասենք՝ դա կարեւոր էլ չէ: Հայաստանում կարեւորը պետական չինովնիկների բիզնեսի ծաղկումն է, ոչ թե բնակչությանը հաղթակերթ սպասարկելը:

ԼԱՐԻՍԱ ՓԱՐԵՆՏՈՅԵՆ

USAID FROM THE AMERICAN PEOPLE

Նյութը հրատարակվում է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID) աջակցությամբ, որի բովանդակության համար պատասխանատու է «Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ն: Այստեղ արտահայտված տեսակետները պարտադիր չէ, որ համընկնեն ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության կամ ԱՄՆ կառավարության տեսակետներին:

EURASIA FOUNDATION

ԱՄՆ-ի նախագահական ընտրությունների խորհուրդն ու զավեշտը

Հանրահայտ կարծիք կա, երբ ԱՄՆ-ում փոշտոց է արձանագրվում, ողջ աշխարհում գրիպի համաճարակ է սկսվում: Ասել է թե՝ երկիր մոլորակի շահերից է բխում աշխարհի այս երկրին մշտապես առողջ ու ողջախոհ ղեկավար կամենալ: Թերեւս այս մտայնությամբ է, որ երկիր մոլորակը յուրահանչյուր 4 տարին մեկ հանակ ուշադրությամբ հետեւում է ԱՄՆ-ի նախագահական ընտրություններին, դիտարկելով խորին խորհրդի պես իրադարձություն: Ամերիկացիներն այս գործընթացում նախընտրում են մեզ հարազատ դարձած 7 չափիր, 1 կտրիր սկզբունքը: Բազմաստիճան զարգացումներն ի վեջո հանգեցնում են ընտրողի ձեռքում հայտնված էլեկտրիկի միջոցով ընտրության կատարման: Մոտ երկու տասնյակի հասնող թեկնածուների մեջ ընտրողը հիմնականում փնտրում է 2 ազգանուններ, ովքեր նախընտրական երկար մարաթոնի ընթացքում պարբերաբար գտնվել են իր ուշադրության կենտրոնում: Թե ինչ են անում մնացյալ մոտ 15-ն այդ ցուցակում, ընտրողն ինքն էլ չի պատկերացնում: Մեր 9 թեկնածուներին նկատի ունենալով, ԱՄՆ-ի պարագայում առավել ես պատկերացում չունենք ինքներս, ճանզի համոզված կամ վստահ ենք, անգամ պատրաստ գրազ գալու, որ ԱՄՆ-ի նախագահական էլեկտրիկում ընդամենը 2 ազգանուն է լինում: Վիճելուց առաջ բարի եղեք ընթերցել այն տեղեկատվությունը, որ խաղել ենք ԱՄՆ-ում 1868 թվականից լույս տեսնող «Համաշխարհային ալմանախ» տեղեկագրից:

Սեվ այսպես. 2004 թ. ԱՄՆ-ի նախագահական ընտրություններում թեկնածուները 17-ն են եղել, 1-ը՝ կին: Նրանցից մեկին մենք բոլորս գիտենք, նա ներկայիս նախագահ կրտսեր Ջորջ Բուշն է, որը հավաքել է ընտրության մասնակիցների 50,73 տոկոսը: Նրա այդ տարվա մրցակից դեմոկրատ Ջոն Քերին հավաքել է 48,27 տոկոսը: Ամենամիչ 140 ձայներ հավաքել է ոգելից խմիչքների դեմ պայքարող կուսակցության ներկայացուցիչ Իելլ Դոդգեն: Թերեւս կարելի է սփոփիչ համարել անկախ թեկնածու Ռալֆ Նադարի ցուցանիշը: Ընտրության մասնակցած 122 մլն ընտրողներից նրան ձայն է տվել 465 հազարը: Ալմանախից տեղեկանում ենք, որ հիշատակված 17 թեկնածուներից 8-ի պարագայում նրանց ձայների տոկոս չի հաշվարկվել: Տարօրինակ պետք է համարել նաեւ այն, որ թեկնածուներ կան նույն կուսակցությունից. Գեյմս Հարիսը եւ Ռոջեր Քալերոն սոցիալ-բանվորական կուսակցությունն են ներկայացնում, որոնցից առաջինը հավաքել է 7000, երկրորդը՝ 3,7 հազար ձայն: Ի դեմ, Գեյմս Հարիսը մասնակցել է նաեւ 2000 թվականի ընտրություններին՝ հավաքելով 7300 ձայն: Այդ տարում առավել հաջողակ էր եղել նաեւ Հեդ Դոդգեն, հավաքելով 208 ձայն:

Առավել զավեշտալին հաղթող դարձած Ջորջ Բուշի եւ նրան զիջած դեմոկրատ Ալբերտ Գորի ցուցանիշերն են: Բուշը հավաքել է 50.459.211 ձայն, Ալբերտ Գորը՝ 51.003.894 ձայն: Առավելությունը կազմում է 544.683 ձայն: Բայց, ինչպես գիտենք, նախագահ ընտրվեց Ջորջ Բուշը: Ինչո՞ւ. որովհետեւ ԱՄՆ-ում յուրօրինակ ընտրակարգ կա, նահանգներն ունեն ընտրիչների սահմանված նորմ. նահանգում հաղթած թեկնածուն ստանում է բոլոր ընտրիչների ձայները: ԱՄՆ-ի ամենախոշոր նահանգ Կալիֆորնիայում նորմը 55-ն են, ամենափոքր նահանգ Ալյասկայում՝ 3-ը: Ստացվում է, որ Բուշի առավել պակաս ձայները խոշոր նահանգներում հաղթելու շնորհիվ նրան ընտրիչների առավելություն են ապահովել: Ստացվում է, որ, օրինակ, բավական է հաղթել 12 խոշոր նահանգներում, որ ապահովվում է 270 եւ ավելի ընտրիչների քանակը, եւ կարելի է ԱՄՆ-ի նախագահ ընտրվել:

Թե ինչ ավարտ կունենա այս տարվա ԱՄՆ-ի նախագահական ընտրադաշտը, կտեսնենք տարեվերջին: Մեզ ընդամենը հարկ է խոհեմ ղեկավար կամենալ այս գեղեցիկ երկրին ոչ միայն մեր 1 մլն հայրենակիցների բարեկեցիկ կյանքը նկատի ունենալով, այլեւ աշխարհում խաղաղության պահպանման առումով, որի ակնառեսը չենք մեր օրերում:

ԳԵՂԱՄ ՔԱՌԻՊՈՒՅԵՆ

Օբաման խնդրատեց Մակֆեյնի անմիտ ելույթը

Նախագահության հանրապետական թեկնածու, սենատոր Ջոն Մակֆեյնը հայտարարել է, թե չիա իսլամի երկիր Իրանը օգնում է սուննիական «Իսլամական Ալ Ղաիդա» խմբավորմանը: 71-ամյա սենատորն Իրանի եւ «Ալ Ղաիդայի» կատեգորյալ հակադրակցության վերաբերյալ հայտարարություն է արել Հորդանանի մայրաքաղաք Ամմանում, իր կարճաժամ ելույթի ընթացքում:

Ոչպես գործակալությունը հաղորդում է Մակֆեյնի այդ ելույթի մանրամասնությունները: Նախագահության թեկնածուի ելույթն ընդհատվել է, երբ նա օգնականը հուշել է, որ չիա իսլամի երկիր Իրանը հազիվ թե օգնի սուննի խմբավորմանը, որը բացահայտորեն կոչ է անում ոչնչացնել «հավատուրաց» չիաներին:

Տվյալ միջադեպից հետո նախագահության դեմոկրատ թեկնածու Բարաք Օբաման հեգնանքով ենթադրեց Մակֆեյնի անմիտ խոսքերը: «Բառացիորեն երեկ սենատոր Մակֆեյնի ելույթում սուննիները, շիաները, Իրանը եւ «Ալ Ղաիդան» միախառնվել էին: Երեւի հենց այդ պատճառով էր նա խլեակել «Ալ Ղաիդայի» հետ որեւէ ընդհանուր բան չունեցող երկրի դեմ պատերազմելու օգտին: Գուցե հենց այդ պատճառով նա բնավ չի հասկանում, որ Իրաքի պատերազմն Ամերիկայի բնանիներին ավելի շատ է ոգեւորել, քան վերջին տասնամյակների որեւէ այլ բան», հայտարարել է Օբաման:

Միեւնույն ժամանակ նա իր տարեց մրցակցին հիշեցրել է «Ուսամա բեն Լադենին դժոխում եւս հետաքրքրելու» նրա խոսքերը, ասելով, որ թիվ 1 ահաբեկչին հարկավոր է որոնել «ավելի մոտիկ տեղերում»՝ Աֆղանստանի եւ Պակիստանի լեռներում:

Հնագիտական նոր հայտնագործություն Ավստրիայում

Վիեննայի համալսարանի «Նախապատմության եւ վաղ պատմության շրջանի» բաժնի հնագետները ավստրիական Հալշտատտ քաղաքում վերջերս հայտնաբերել են մի հմայիլ, որի վրա հրեական աղոթք է գրված եղել, տեղեկացնում է էլեկտրոնով սացված հաղորդագրությունը: 2,2 սմ երկարությամբ ոսկեգույն հմայիլը գտնվել է մ. թ. 3-րդ դարին պատկանող հոմեացի մի երեխայի գերեզմանում եւ համարվում է Ավստրիայի տարածքում հրեաների գոյության ամենավաղ ապացույցը: Մինչ այժմ 9-րդ դարին պատկանող նմանկներն էին համարվում անուրանալի փաստ: Դրանք գտնվել էին Պանոնիս կոչված նախկին հռոմեական նահանգում, որն այժմ գտնվում է Հունգարիայի, Սերբիայի եւ Խորվաթիայի տարածքներում:

Գիտնականների համար հատուկ նշանակություն է ունեցել աղոթքը, որը դժվարությամբ վերծանվելուց հետո պարզվել է, որ Հին կտակարանից վերցրած աղոթքի մի տողն է, որն ասում է. «Ով Իսրայել, լսե, մեր տեր Աստուածն է մեր միակ տերը» (գիրք երկրորդ Օրինաց):

Նորահայտ հմայիլը ապրիլի 11-ից ցուցադրվելու է Այզենշտադտի Բուրգենլանդ պետական թանգարանում:

Հ. Օ.

Մերկելը «Հոլոքոստի ամոթի» մասին է խոսում Քնեսեթում եւ այցելում «Յադ վաշեմ»

Իսրայելի պետության հիմնադրման 60-ամյակի առթիվ 3-օրյա իր այցելության ավարտին Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելը Իսրայելի խորհրդարանում ելույթ ունենալով նշել է, որ գերմանացիները «ամոթի զգացումով են համակված» նացիստների իրագործած Հոլոքոստի համար եւ որ Գերմանիան ընդմիշտ կմնա Իսրայելի «իսկական բարեկամն ու գործընկերը», հաղորդում է Երուսաղեմից BBC-ի լրագրող Կայլա Ադլերը:

Նա ծափահարությունների է արժանացել Քնեսեթում, երբ իր խոսքի սկզբին եբրայերենով շնորհակալություն է հայտնել խորհրդարանին դիմելու «պատվի» համար: Մերկելը Գերմանիայի կառավարության առաջին ղեկավարն է, որ այցելում է Իսրայել: «Խոնարհվում եմ զոհերի հիշատակի, մազապուրծների եւ բոլոր նրանց առաջ, ովքեր օժանդակեցին նրանց ողջ մնալ», շարունակել է նա այնուհետեւ գերմաներենով, որը որոշ խորհրդարանականների մեջ «ցավագին հիշողություններ» արթնացնելով, սթափել է նրանց դյուրս գալ դահլիճից:

Նրան շատ ջերմ են ողջունել Իսրայելում ընդհանրապես եւ նրա այցը նպաստել է ամրապնդելու երկկողմ հարաբերությունները: Իր կարճենտ այլ անդամների հետ նա հանդիպումներ է ունեցել Իսրայելի պաշտոնական անձնավորությունների հետ եւ այցելել է «Յադ վաշեմ» ողբակիզման հուշահամալիր: Պայմանավորվածություն է ձեռք բերվել տարեկան պարտադիր հանդիպումներ ունենալու վարչապետների եւ նախարարների մակարդակներով եւ սերտացնելու հարաբերությունները քաղաքական, մշակութային, տնտեսական եւ հասարակական ոլորտներում:

Իսրայելը առաջին անգամ է նման համաձայնագիր ստորագրում որեւէ օտար երկրի հետ:

Հ. Օ.

ԳԼԽԱՎՈՐ ՍՏԱՆԻՍԼԱՎԻՑԸ

Բեն Լադենը սպառնում է Եվրոպայի ղեկավարներին եւ պապին

«Ալ Ղաիդայի» տեղեկատվական կայքէջ «Աս Սահաբում» հայտնվել է Ուսամա բեն Լադենի ձայնագրված ելույթը, որն ուղեկցվում է ինքնաձիգ բռնած բեն Լադենի լուսանկարով: «Ալ Ղաիդայի» առաջնորդը եվրոպական երկրների կառավարություններին, ինչպես նաեւ պապին նախազգուշացնում է, որ նրանք պատասխան կտան Մուհամմեդ մարգարեի ծաղրանկարների հրապարակման համար:

Ֆրանսպրեսը մեջբերում է բեն Լադենի այն խոսքերը, որ եվրոպական երկրների կառավարությունները կարող էին կանխել ծաղրանկարների հրապարակումն ու վերահրապարակումը, բայց ոչինչ չարեցին այդ վիրավորական արարքի դեմն առնելու համար:

